«بوزانتيون»
ارمنيجه يومى وسياسى غزته. صاحب امتياز ومديرى
بوزانت كجيان
مطبعه وادارەخانه سى باب عالى جادەسندە ٣٨ نمرولى
دائرۀ مخصوصەدەدر

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Տարեկան 7 մէճ. վեցամսեայ 3 1/2, եռամսեայ 2։ — Արտասահման 40 ֆր. վեցամսեայ 20, եռամսեայ 10։ Թղթատարի ծախք մեր վրայ, բաց ի Բոսթ Լոքալէ։

ԲՈՒԶԱՆԴԻՈՆ

ՔՍԱՆ ՓԱՐԱ — ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ — ՔՍԱՆ ՓԱՐԱ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲՈՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
Ի գլխոյ Թերթին կ'ստորագրէ մի միայն ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆԸ
Առ որ կ'ուղղուին ամէն գրութիւնք

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur-Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab Aali Djaddéssi, No. 38.
CONSTANTINOPLE

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 306 | Կ. ՊՈԼԻՍ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 1897 ՀՈԿՏԵՄԲԵՐ 29/10 ՆՈՅՄ. | 15 ՃԻՄԱԶԻ ԻՒԼ ԱԽԸՐ 1315. | 29 ԹԸՇՐԻՆԸ ԷՎՎԷԼ 1313 | Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 306

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԽԱՐԴԱՑ

Քաղաքակրթութիւնը նոր քայլ մը առաւ Ափրիկէի խորերը։ Ինչպէս այս աւուր Թուով կ'պատմենք, կատարեցաւ բացումը Պուլուվայոյի երկաթուղւոյն, որ ծովուն հետ ուղղակի հաղորդակցութեան մէջ կ'դնէ մայրաքաղաքը Րոտեսիայի, որ Մաթապելէ և Մաշոնա երկիրներուն միացումովը կազմուած է, այսինքն՝ Հարաւ-Ափրիկեան Բրիտանական Ընկերութեան չահաստանը։ Քանի մը տարի առաջ Մաթապելէներն անկախ պետութիւն մ'էին իրենց Լօպէնկուլա Թագաւորով, բայց որովհետեւ Մաշոնաները կը նեղէին, և Մաշոնաներն ալ Անգլիացիներուն հետ աղէկ էին, Սեսիլ Րոտս կռուի բռնուեցաւ Լօպէնկուլայի հետ. յաջողեցաւ մայրհայրենիքն համոզել որ իր օգնութեան հասնի. Լօպէնկուլա գերի վարեցաւ, և իր երկիրներ Անգլիոյ անցան։ Բայց Անգլիացիք չուտով չկրցան հանդարտեցնել Մաթապելէ երկիրը։ Միշտ ապստամբութիւններ և խռովութիւններ կ'ծագէին իրենց իշխանութեան դէմ։ Տարի ու կէս առաջ, սոսկալի չարժում մը եղաւ Մաթապելէներու կողմէ, և չատ սուղի նստաւ Անգլիացիներուն։ Երկաթուղին ամրապէս պիտի հաստատէ Բրիտանեան իշխանութիւնը։ Բայց Թերեւս անկէ աւելի օգտակար պիտի ըլլայ հանդարտութեան վերահաստատման «կախարդներուն կառավարութեան» քայքայումը։ Ի՞նչ է այս կառավարութիւն. — կ'արժէ որ երկու խօսքով բացատրենք։

Կախարդութիւնը չատ առաջ գացած արհեստ մ'է Մաթապելէ և Մաշոնա կիսավայրենիներուն մէջ։ Կախարդներն ոսկրներ կ'կարդան. մարդուն բախտը կ'գուչակեն. «դէչ աչքի» դէմ կ'պաչտպանեն իրենց հաւատացեալներ. յուռութներ (Նուսխա) կուտան գործոց յաջողութեան համար, կամ հեռացնելու համար չարութեան կապերն որով «ոգի»ները, «դեւ»երը, կամ մեռնողներուն հոգիները կրնան կապած ըլլալ ողջ մնացողները։

Այս կախարդներու մեծն էր Քակուպի, որուն տեղացիք «Աւեծի ճանկ» տիտղոսը կուտային, և այնքան հրապուրուած էին անոր կախարդիչ կարողութեամբ որ իբրեւ հոգեւոր պետ և իբրեւ ազգապետ կ'նկատէին զայն, ու անոր պատուէրները ճշդիւ կ'գործադրէին։ Քակուպի չատ ճարպիկ մարդ մ'էր։ Բնական երեւոյթներն ուչի ուչով ուսումնասիրած էր, և չատ բան կը գուչակէր։ Օրինակի համար, արջառախտին գործելիք սոսկալի աւերումներն ամիսներով առաջ գուչակած էր, լսած ըլլալով Զամպէզի գետին հիւսիսակողմը կենդանեաց հիւանդութեան ճարակիլը։ Նոյն կերպով գուչակած էր նաեւ երաչտութիւնը, մարախներն և ուրիչ հանրային աղէտներ որք բնական պատճառներէ կախում ունին, ու այս ամէն չարիքները կ'վերագրէր «Մեծ Ոգիին» բարկութեան Մաթապելէ և Մաշոնա ցեղերուն դէմ։ Բնիկները, տեսնելով մարդուն գուչակութեանց ճշդութիւնը, ամենեւին չէին տարակուսեր անոր գերբնական կարողութիւններուն։

Ուրիչ կախարդներու հետ գործակցութեամբ, Քակուպի քաղաքական, զինուորական և դատական ճշմարիտ վարչութիւն մը հաստատած էր։ Եր դատավճիռներ անդառնալի էին։ Բնիկներուն մոլեռանդ քաջութիւնը գրգռելու ձեւերը չատ լաւ գիտէր։ Համոզուած ըլլալով որ Անգլիացիք այս երկիրն արչաւելնուն պէս իր դասակարգին հաց պիտի չմնայ, ամէն հնարք ի գործ դրաւ տեղացիներուն ատելութիւնը չարժելու Եւրոպացիներուն դէմ։ Երբ Անգլիացիք ջախջախեցին Լօպէնկուլայի կանոնաւոր բանակն, և տիրեցին «Րոտեսիայի», իրենց առաջին գործն եղաւ արգիլել կախարդի արհեստն, և անկէ ծագում առնող կարգ մը վայրագ սովորոյթներն, օրինակի համար՝ նորածին երկուորեակներու սպանումը։ Քակուպի չվարանեցաւ իր հաւատացեալները զէն ի ձեռին Անգլիացիներուն դէմ մղելու։ Մաթապելէներու և Մաշոնաներու կախարդները խօսք մէկ ըրին, և գաղտնապէս կազմակերպեցին իրենց երկիրներու մէջ կամ մօտ հաստատուած Անգլիացիներու ջարդը։ Անգլիացիք ձեռքի տակէ իմացան որ բան մը կ'դառնայ իրենց համար, բայց իրենք տակաւին զգուչական միջոցներ ի գործ դնելու ժամանակ չունեցած, Մաթապելէներն յարձակեցան Անգլիացիներուն տուներուն ու ագարակներուն վրայ, այրերը ջարդեցին, կիները գերի տարին, կահ կարասիքը կողոպտեցին, և էն գեղեցիկ չէնքերուն կրակ տուին։ Արդէն հարիւրէ աւելի Անգլիացի ջարդուած էին, երբ գաղթականութեան մնացեալ մասն ոտք ելաւ, և իր պաչտպանութիւնը կազմակերպեց ամէն տրամադրելի միջոցներով։ Ընտանիքներ եղան որք իրենց տուներուն մէջ ամրացան, և Մաթապելէներուն դէմ դրին օրերով, մինչեւ որ անգլ. զօրք հասաւ նախ գաղթայքն վարչութեան կողմէ, և յետոյ Ճիպրալթարէ։

Բայց կախարդապետն իր նպատակին հասած չէր դեռ։ Քակուպիի մարդիկն ամէն կողմ չրջեցան։ Լուր հանեցին թէ Մաթապելէները մեծամեծ յաղթութիւններ տարած են Եւրոպացիներուն վրայ, թէ զՊուլուվայօ հիմնայատակ կործանած են, մէջի Անգլիացիներով, և թէ հիմա ժամանակ է որ Մաշոնաներն ալ Մաթապելէներուն չափ քաջութիւն ցուցնեն հասարակաց թշնամին դէմ։ Այս անգամ Քակուպի յուռութներ բաչխեց կռուոյ դաչտն ելնել ուզող այրերու, կիներու, նոյն իսկ տղաքներու. բայց Անգլիացիք պատրաստ զօրք ունէին կռուոյ դաչտին վրայ, և ա՛լ յանկարծակիի չեկան։ Բնիկներն իրենց պարտութեան պատճառն հարցուցին Քակուպիի։ Սա պատասխանեց թէ «Մեծ Ոգին» նեղացած է իրենց. որովհետեւ Թշնամիէն առնուած կողոպուտն ամբողջովին իրեն (կախարդապետին) չէին բերած, այլ իւրացուցած էին անիրաւաբար։ Անգլիացիք հասկցան թէ ո՛վ էր ժողովուրդն իրենց դէմ գրգռողն. հետամուտ եղան, և ամիսներով փնտռելէ ետքը, վերջապէս ձեռք ձգեցին անցեալ չաբթու։— Քակուպի, հազար ու մէկ ծակ ու ծուկ մտնել ելնելէ ետքն, հասկնալով որ թէ բռնուի՝ կեանքը պիտի չկրնայ ազատել, մինչ ենթէ ներողութիւն խնդրէ, կրնայ ի գութ չարժել «Սպիտակ»ներն, անձնատուր եղաւ։ Բնիկները, կախարդներուն իշխանութեան վրայ հաւատք չունենալով այլ եւս, կ'համակերպին իրենց նոր ճակատագրին։

Այս պատմութեան մէջ հետաքրքրաչարժ կէտը սա՛ միայն ըլլալ կ'թուի մեզ թէ «դեւ»երու, «չար ոգի»ներու, «չար աչք»ի, «յուռութ»ներու և «հմայութիւն»ներու վրայ բոլոր այս նախապաչարմունքներ, որք ասիական ժողովուրդներու յատուկ ըլլալ կ'թուէին, ե՞րբ և ի՞նչ միջոցաւ տեղափոխուեր են Խաւարակուռն Ափրիկէի խորերը։ Զուլուներու, Մաթապելէներու կախարդներուն վրայ կարդացածնիս նոյն է ինչ որ գիտէինք ասիական կախարդութեանց և ցայսօր տեւող նախապաչարմանց վրայ։ Ասոնց ծագումն ասիակա՞ն է թէ ափրիկեան։ Ո՞ր ճամբով այն երկու մեծ ցամաքներ իրարու առած տուած են այսպիսի գաղափարներ, երբ դարուս երկրորդ կիսուն մէջ առաջին անգամ Ափրիկէի ներսերը մտնող եւրոպացի երկրախոյզք կ'կարծէին բոլորովին նոր և անծանօթ ժողովուրդ մը գտած ըլլալ։

ԿԻՆՃ ԵՒ ՃԱՊԱՂՋՈՒՐ

ՄՈՒՇ, 14 Հոկտ. 97.

Ինչպէս հնուց, նորումս ալ չատ քիչ կամ երբեք չի խօսուիր Կինճի վրայ։ Կինճի գաւառն, որ իր անունն առեր է Կթառին կամ Կթաւն աւանէն, Մշոյ արեւմտակողմն է. կեդրոնն է Արչէն գիւղն, ուր կ'նստի կառավարիչը։ Ոսնի Ճապաղջուր, Կոյնուկ, Մանազքութ, Խուլբ և Խեան գաւառակներն, յորս կան չատ կամ քիչ Թուով հայաբնակ գիւղեր։ Մենք պիտի խօսինք այս հեղ Կինճի եւ Ճապաղջուրի վրայ. Քանի տարի է որ Կինճ իբրեւ ուրոյն գաւառ մը սկսաւ ճանչցուիլ. Կինճի ժողովուրդ Թէ քրիստոնեայ և Թէ ոչ-քրիստոնեայ տարրն, այդ քսան տարւոյ մէջ ընտելացան քաղաքակիրթ կենաց։ Բուն Կինճը կամ Կթաւնը քրդաբնակ գիւղ մ'է հիմակ Եփրատի քով. տեղս հնախօսակոյն է իր հին ամրոցը, խիստ բարձր, անառիկ և ապառաժուտ գագաթի մը ծայր չինուած. Իր հսկայ աւերակներ կան ու կ'մնան։ Արեւելքէն ու հարաւէն Եփրատ եւ հիւսիսէն Կինճի ջուրը պարսպելով զերեր. մէկ չեղ չաւիղ կ'մնայ բերդ տանելու արեւմտեան կողմէն, որ չը գիտցողի մը համար բաւիղ է։ Բերդի ծայրէն երբ դիտես ընդիրատ փոքրիկ առու մը կ'թուի, թէ բերդի բարձրութենէն և թէ այն պատճառաւ որ Եփրատ չգտնելով հոն Մշոյ դաչտի բուլխը գետինը, զոր լիզելով ու քերելով փռուի ու տարածուի, կ'սուզուի Կինճի անչարժ ապառաժներու հետ ծեծուիլ և վերջապէս գլուխ կախ սողոսկելով և փրփրերախ կ'անցնի. տեղացիք, քուրդ եւ հայ, առածի կարգ են անցուցեր. «Եփրատ գետը Մշոյ դաչտն իր առջեւ առնելով կուգայ, իսկ ի Կինճ մախաթի (չուվալըղը) ծակէն կ'անցնի։» Քսենոփոնի նկարագրած հին ու դարաւոր, Թէպէտ մահառիթ, լաստը չկայ հոն, ինչպէս է ի Մուշ և այլ տեղեր. այլ ի Կինճ անցնելու համար կամուրջ մը միայն որ կ'դողայ իր վրայ ելնող ոտքերու տակ, դողացնելով անսովոր քալողին սիրտն ալ, մազէ կամուրջէն անցնողի մը պէս, միայն Թէ ճարպիկ լողացողք, ոչխարի մը տիկ ուռեցնելով անոր չորս ոտքերը կ'կապեն իրենց ոտքերուն ու ձեռքերուն, եւ կ'ձգեն զիրենք Եփրատի ամեհի հոսանաց մէջ,— ուր ոչ այնչափ ալիք, որչափ լայնանիստ և ահագին քարինք են վտանգաւոր —, եւ անվնաս կ'անցնին ու կ'դառնան իրենց այդ տիկերով, որք նչանաւոր են իրենց հըպնութեամբ, Թեթեւութեամբ և 1-2 ղրչ. ամենաչնչին արժէքով։

Կինճն իւր լերկ ու Թաւուտ կողերու և գոգերու վրան ու մէջն ունի Կծու, Փարխու, Ճապկընուտ, Անկաք, Կըռօնոս, Քղմուտ, Արծէնք, Պօղի, Նորիկ, Քարուտ, Արչէն, Պօկլան, Հասանպէկ, Ոսիմըրկ և Մարտպէրման գիւղեր, ուր կը գտնուին Հայեր. բացի Կծուէն քահանայ և բացի Արչէնէն միւս գիւղեր եկեղեցի չկայ. դպրոց քանի մը տարի Արչէն բացուեցաւ, բարերարութեամբ Միաց. Ընկ. և հիմա գոց է։ Կինճի հայեր, բարեպաչտ, հաւատով և աստուածավախ են. ամէն ոք իր տան մէջ կ'աղօթէ, անքահանայ, անաւրացու, պատարագի երես չեն տեսներ. իրենց նորածինք և ննջեցեալք ամիսներով ու տարիով քահանայէ զրկուկ կը մնան. հերետիկոս է ով որ յանդգնի ուրբաթն իսկ ուտել. այնչափ մեծ հաւատք ունին կրօնականաց ու առաջնորդաց վրայ որ կ'ըսեն. «Եթէ վիչապն անիծեն որդ, և առիւծն անիծեն, մուկ կը դառնան. և որու երդիքէն որ սեւ Թուղթ (նչան անէծքի) ձգեն, անոր խմորն իսկ կ'որդնոտի».(*) հա՞րկ է ըսել Թէ ադոնց այդ պարզութենէն չատ կ'օգտուին կրօնականք։

Կինճը լեռնային դժուար ու դժուար եւ քարուտ ըլլալով, լաւ եւ ընդարձակ վարելահողեր չունի. իր երկրագործութիւն ընդհանրապէս կորեկի չուրջ կ'դառնայ, ոչխար եւ սեւատաւար (էզ, կով) կ'պահեն. ունին վայրի մրգեր՝ ընկոյզ, խնձոր, դամնի, քարձին, ալուճ եւ կաղին. վերջինէս բռնըներով կ'բերեն, կ'հորեն. ձմեռը կը [illegible], կ'խառնեն թանհասի հետ եւ կ'ուտեն. Ձմրան բուքերուն ու ցուրտերուն կուրծքերնին բաց է, ձեռքերնին անթաթնոց, ինչպէս են ընդհանրապէս ամէն լեռնաբնակք։ Կինճեցին չատ հաղորդակցութիւն չունի դրացի գաւառներու եւ քաղաքներու հետ. արտածութեան եւ ներածութեան բան չունի. ինքն իր մէջ է ինչ որ է, եւ ադոր համար զմայլմամբ կ'նայի վաճառականի մը ապրանաց տեսակներուն, քաղաքակիրթ մարդու մը՝ երբ կ'խօսի ու կ'քալէ, տիրացուի մը՝ երբ չարականն կ'ըսէ, քահանայի մը կամ վարդապետի մը՝ երբ Աւետարան կարդայ. զօչաքաղ կրօնականաց և չահախնդիր վաճառականաց ամենայարմար տեղ է, իրենց տներ ստորերկրեայ և ցած են. ներս մտնողը պէտք է ծունկի գայ, ի բաց առեալ Արչէն, ուր սկսեր են քաղաքական ճաչակաւ չէնքեր չինուիլ։ Ճապաղջուր այդչափ չէր. անոր հայերն երկրագործութեան ու վաճառականութեան մէջ զարգացած էին. իրենց բրինձը, ցորենը, կորեկն ու կիլիլի մինչեւ Մուչ կուգար կարաւաններով. Բալուի և Խարբերդի հետ առեւտրական հաղորդակցութեան մէջ էին. բնակիչք կիրթ և գիրգասէր, հեռաւապէս և կրօնասէր. անտեսական տագնապին ենթարկուեցան Ճապաղջուրցիք ալ. այժմ քահանայէ զուրկ են. ի զուր քահանայ և դասատու կը խնդրեն, ո՞վ կ'լսէ. ամէն մարդ եղող պատասխան կ'վազէ, ոսկին եղած տեղն ո՞վ կ'նայի պղինձի։ Կրօնն երթալով կ'հեռանայ այդ տեղի հայերէն, կ'խորթանայ և կ'օտարանայ. ո՞վ է պատասխանատուն, ժողովո՞ւրդ թէ ժողովրդապետք։

Վարդավառին եկան Ճապաղջուրի գիւղապետք ի Ս. Կարապետ, երբ հասան եկեղեցւոյ դուռը, արտասուաց հեղեղ մ'էր որ անոնց անբաղդ աչքերէն կ'թափէր Ս. Կրպտ.ի քարերու վրայ. բերանով ու Թեւերով դրկած անոր դուռն ու դրանդիքը. չէին կչտանար պագնելէ և աչքերնին անոնց վրայ քսելէ. մեր Առաջն. Փոխանորդ Հօր, որ իրենց ալ է, ի զուր յիչեցուցին ողբալով թէ՝ «Մեր բարոյական սովն աւելի զգալի է, մեզ քահանայ եւ վարժապետ տուր. բաւական է որչափ մեր եկեղեցիք գոց մնացին, հերիք է որչափ մեք անհաղորդ եւ մեր ննջեցեալք անմաչթոց մնացին»։ Բայց տխուր ու տրտում, գլուխնին կախ, աչքերնին թաց մեկնեցան Ս. Կարապետէն, որոյ Թեմականներն են, եւ դեռ միւս տարի ալ իրենց հասիկ հասիկ բրինձներով կ'զարդարէին Ս. Կարապետեցւոց սեղանները, ճօճ տալով անոնց դգալներուն։

Կ'հարցնենք Թէ ի՞նչ պիտի ըլլայ ասոնց բարոյական վիճակն անհովիւ, անքահանայ։ Կեդր. Վարչութիւն հեռի, Էջմիածնի Ճեմարան եւ Սանասարեան Վարժարան արդէն ասոնց տղեկներն արժանի չէ՛ն երթալու. Մանկանոց չկայ, զի անոք տղոց տէր չկայ. Ս. Կարապետի դպրոցն ալ հազիւ կ'բաւէ Ս. Կարապետցւոց։ Գէթ Միաց. Ընկերութեան Արչէնի դպրոցը վերաբացուէր, որ Թեթեւ ծախքով կարելի է. եթէ մեր եւ Կինճի Առաջն. փոխանորդ Հայրը Կինճի Առաջնորդարանի (որ տեղացւոց քրտինքով չինուեցաւ) տարեկան վարձքը բաչխէր ի սէր կրթութեան Կինճի խեղճ ու կայտառ տղոց, սիրով կ'մասնակցէին և տեղացիք իրենց աղքատութեամբ, և այս կ'ըլլար մեծ մխիթարանք Կինճի հայ ժողովրդեան։ Ցաւօք սրտիւ ըսած եմ խոստովանիլ Թէ ցարդ այդ տեղի սովեալ ու ցամքած Հայերէն՝ պսակադրամ, հոգեբաժին և ննջեցելոց կապուտ-կողոպուտը կ'հաւաքուի Մշոյ Առաջնորդարանէն. բան մը, որ գործ է վարձկան հովուի, որոյ պէտքն եղած է միայն բուրդն ու կաթը։ Որո՞ւ մաքէն կ'անցնի Ճապաղջուրէն կամ Կինճէն տղաք որդեգրել և ղրկել չնորհքով դպրոցներ։ Ադոնք կ'մնան կարօտ ամէն տեսակ խնամքի, եւ քիչ յետոյ ամենայն պարզութեամբ կ'տեսնենք կամ կը լսենք որ հայեր գաղթեր են, կամ այլ։ Առաջնորդք իրենց մարմնական հանգստութենէն աւելի, չա՛տ աւելի, իրենց խղճի հանգստութեան պէտք է նային. սին համբաւներէ աւելի գործօն կեանքի մը թող փարին, եւ այս կ'ըլլայ ինքնաճանաչութեամբ և պարտականութեամբ. ո՞ւր է հիւանդը, բժիշկ հոն վազելու է. ո՞ւր է վէրքը, դեղն ու դարմանն հոն տանելու է. ո՞ւր է Թոյնը, դեղթափն հոն հասցնելու է։

«Սաստել, յանդիմանել եւ մխիթարել», ահա երրեակ բառեր ուր ըլլալու են առաքելութեան, մեծութեան, ո՞վ պիտի մխիթարէ սգաւորներն ու յուսահատներն իրենց հոգեկան ցաւերու մէջ, ո՞վ պիտի սաստէ ու յանդիմանէ եւ խլէ մեր սրտէն մեր ներքին որոմներն — տգիտութիւն եւ մոլեկրութիւն. այս բաներ ընողը պէտք է լոյսերես ըլլայ. . .։

Միաբ. Մշոյ Ս. Կրպ.ի վանուց
Ա. ՍԱՐ. Մ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

(*). — Բաղդատեցէ՛ք Մաթապելէներուն կախարդութեան հետ, (այս աւուր Խմբագրականով բացատրուած)։ Մ. ԽՄԲ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՋԵՐ

Անգլիոյ Խորհրդարանը. — Կապոյտ Տետրակ. — Աշխարհագրական դրամ մը. — Բիլինկեան կղզիները. — Ռոպէնսոնի երազը։

Վերջերս Անգլիոյ Խորհրդարանին անդամոց բաժնուեցաւ Կապոյտ Տետրակ մը որ քաղաքագէտներէ աւելի գիտուններու հետաքրքրելու բնութիւնն ունի։ Այս տետրակ հաւաքածոյ մ'է տասնեւմէկ տեղեկագիրներու, որք Սինկաբուրի կառավարչին հրամանաւ պարբերաբար խմբագրուած են Բիլինկեան կղզիներու բնակչաց կացութեան վրայ։ Պատմութիւնն այս բնակիչներուն, որք կրնան ճշմարիտ Րոպէնսոններ համարուիլ, չատ յանկուցիչ է։ Կղզիները 1609ին գտնուեցան Բիլինկ անուն նաւապետէ մը որ իր անունով մկրտեց զանոնք եւ զորս 1836ին Տարուին մանրամասնօրէն ուսումնասիրեց, գտնելով լուծումն այն չատ մը հանելուկներուն, որք ծովերուն ծոցէն անդադար բղխող նոր «երկիրներու» կազմութեան և անոնց կենդանական ու բուսային տարրերուն կ'վերաբերին։ Վերեւ յիչուած Կապոյտ Տետրակը կ'չարունակէ Տարուինի սկսած քննութիւնն, եւ համառօտ կերպով կը պատմէ թէ ի՛նչպէս բնակելի եղան այդ կղզիներ։ Բիլինկեան կղզիները կ'գտնուին Հնդկական Ովկէանոսի մէջ, Սումադրայի և Ճավայի հարաւային— արեւմտեան կողմն, եւ կեդրոնական ծովակի մը չուրջը մանեկաձեւ արքիպեղագոս մը կ'կազմեն։ Հովերն ու Թռչուններ այս կոյս հողերուն մէջ բերած ցանած են զանազան սերմեր, որք բուսական բարակ խաւ մը ծածկած էին մակերեւոյթը։ Այս վիճակին մէջ կ'գտնուէին Բիլինկ կղզիներն, երբ 1825ին Րոս անունով Սկովտացի մը այցեց այդ անբնակ վայրերն, և անոնց դիրքէն հրապուրուելով 1827ին նորէն եկաւ իր հայրենակիցներէն ոմանց ընկերակցութեամբ հոն հաստատուելու։ Բայց իր բացակայութեան միջոցին Հէր անունով մէկն երկու հարիւր Մալէզիներով եկած հոն հաստատուած էր։ Բաւական վէճերէ ետք, Հար՝ Սինկաբուր քաչուեցաւ և Մալէզիները Րոսի իշխանութեան ներքեւ մնացին։

1857ին Բրիտանական մարտանաւ մը, Րոսի իրական իշխանութիւնն հաստատելով հանդերձ, անուանապէս գրաւեց արքիպեղագոսն յանուն իր կառավարութեան։ Րոս 1871ին մեռնելով, իրեն յաջորդ Թողուց իր որդին, Ճորճ Րոս, որ մինչեւ այսօր «կ'Թագաւորէ» Բիլինկի վրայ։ 1885ին Սինկաբուրի կառավարիչն անգլիացի պաչտօնատար մը ղրկեց հոն, անցած դարձածին վրայ տեղեկագիր մը չինելու միակ պաչտօնով։ Քննիչը տեսածին վրայ հիացաւ մնաց։ Հայրախնամ կառավարութեան մը ներքեւ արքիպեղագոսը բարգաւաճած էր եւ Րոսի ընտանիքին անդամներէն զատ ունէր...516 բնակիչ, որոց 377ը կղզւոյն մէջ ծնած էին։ Մալէզիներն, եղած յորդորներու չնորհիւ, բազմակնութենէ հրաժարած և ամուսնութեան պայմանները կանոններով սահմանած էին։ Մէկ խօսքով, ժողովրդեան ետքն, իր վայրենի հանգամանքը քիչ քիչ կորսնցնելով, ազնուացած էին։ Կղզւոյն մէջ կատարուած նոր բարեկարգութիւններն և յառաջդիմութեան աստիճանն ամէն տարի մեծ գոհունակութեամբ կ'արձանագրուին մասնաւոր տեղեկագիրներու մէջ, որք այս անգամ Կապոյտ տետրակի ձեւով ներկայացուեցան անգլիացի երեսփոխաններուն։

Նախորդ տարին բնակչաց թիւն 594ի հասած էր։ Այս բնակիչք կ'աչխատին չահագործել հնդիկ ընկոյզներն որ երկու նաւերու միջոցաւ կ'արտածուին մանաւանդ ի Պաթավիա, տարին 5—600 տակառաչափ քանակութեամբ։ Ներածումներն են ալիւր, չաքար, Թէյ, բրինձ և ծխախոտ, տարեկան 50,000 ֆր.ի արժէքով։ Միակ անպատեհութիւնը զոր ունին այս կղզիներ, մուկերու չատութիւնն է։ Օձ և վտանգաւոր տեսակէ կենդանիներ ըլ- [illegible] նները չատ են։ Բանջարեղէններն առատօրէն կ'աճին Արքիպեղագոսին մէջ։ Ուսուցչութիւնն արդիւնաւոր է։ Մէկ խօսքով Բիլինկեան կղզիներն որ մինչեւ 1827 ամայի էին, այն Թուականէն ի վեր բնակավայրն եղան աչխատասէր, պարկեչտ, անկախ ու բարեկեցիկ ժողովրդեան մը, որ քաղաքակրթութեան մէջ օր օրի կ'յառաջդիմէ, եւ օր մը, որ չատ հեռու չէ, պիտի կրնայ կարգ մը քաղաքակիրթ ժողովուրդներու նախանձը չարժել։ Րոպէնսոնի երազն իրականացած է։

Թարգմ.
Ս. Ռ. ՉՀՕՄԼԷՔՃԵԱՆ

ԲՈՂՈՔ ՄԸ ՊՈՒԼԿԱՐԻԱՅԷՆ

Լրագրոյդ 262 Թուոյն մէջ «Ազգատախնամներու չուրջը» խորագրոյն տակ ըսած էիք Պալթու Ազգատախնամին համար թէ «Հիմնած է նախորդ քարոզիչ Տ. Տաճատ Վ. և հիմակուան քարոզիչ Տ. Սմբատ Վ.ալ կ'աչխատի հաստատ հիմերու վրայ դնել»։ Բայց իրողութիւնն այնպէս չէ։ Պալթու Ազգատախնամը չարունակութիւնն էր և է 19 տարի առաջ կազմուած Խորէնեան ընկերութեան, որուն միակ նպատակն էր վարժարանի աղքատ աչակերտներուն նիւթապէս օգնել։ Այս ընկերութենէն էր, որ կազմութենէն 8—10 տարի վերջ, Սանուց անունով ընկերութիւն մ'ալ հաստատուեցաւ վարժարանի երկսեռ աչակերտներէն՝ նոյն նպատակն աւելի ընդարձակ սահմանի մէջ գործադրելու, և յաջողեցաւ ալ։ Այս երկու ընկերութիւնք զուգընթաց կ'չարունակէին իրենց գործունէութիւն և ժողովրդին ջերմ վստահութիւնը գրաւած էին։ Անցան տարիներ, և այս ընկերութիւնք Պատրիարքարանէ վաւերանալով առին Ազգատախնամ անունն, որպէս զի կարողանան իրենց Թաղին ոչ միայն աղքատ տղաքներն այլ և Թչուառ ընտանիքներն ալ կարելի եղածին չափ հոգալ և խնամել. Ընկերութիւնը Թաղեցւոց վստահութեան ապաւինած կրկնապատկեց իր եռանդն ու գործունէութիւն, և իր չրջանակին մէջ գտնուող ուրիչ Ազգատախնամներու նախանձը չարժեց։ Անցեալ տարուան [illegible] տագնապէն Թէեւ դադրեցաւ, բայց այսօր

ու բախտութեամբ կ'կարդանք Թերթիդ մէջ թէ իր մրցման քարոզչին աջակցութեամբ դարձեալ կ'վերականգնի ու թեւերուն տակ կ'առնէ թաղին խեղճ, կարօտ եւ աղքատ հիւանդները։

Պարտք կը համարիմ շնորհակալութիւն յայտնել Տ. Սմբատ Վ.ի որ չի խնայեր իր ջանքն ու աշխատութիւն, այդ ընկերութեան վերականգնման։ Տ. Տաճատ վրդ.ի հիմնած ըլլալն, ինչպէս կ'տեսնուի, սխալ մ'է պարզապէս. անոր հիմնադիրք այսօր ողջ առողջ են, և որոնց կ'ուրախանան իրենց սկսած գործին շարունակութեան լուրն առնլով։ Աւելորդ չէ հոս յիշել թէ Ընկերութիւնը կարեւոր գումար մը ունի աւանդ գրուած Արչակ էֆ. Գասպարեանի քով. քանի քանի անգամ Տնտես. Խորհրդոյ ատենին վրայ խնդիր եղած է այդ ստակն ետ առնլով դրամատուն մը յանձնելու համար տոկոսով. ժամանակաւ լրագրական հրապարակն ալ ելաւ այս խնդիր, բաւական յուզում պատճառելով ժողովուրդին, բայց արդիւնք մը չունեցաւ։

Այժմ ներկայ Տնօրէն Խորհրդին կը մնայ հարկ եղած միջոցներով ետ առնել այդ գումարն և դրամատուն մը յանձնել տոկոսով, ապագային անշարժ կալուած մը գնելու և միանգամ ընդ միշտ հաստատուն աղբիւր մը հայթայթելու համար Թաղին կարօտ աղքատներուն։ Տնօրէն Խորհրդոյ առաջարկը կրկնուեցաւ Թաղ. Խորհրդին կողմէ ալ, որ իրեն յանձնուի տոկոսով, սակայն այդ եւս չընդունուեցաւ. ուրովհետեւ կասկած կայ թէ մի՛ գուցէ իր նպատակին չծառայեցնէ, ինչ որ ուրիշ տեղեր տեսնուած է օրինակը։

ՄԿՐՏԻՉ Ց. ՊԻՒԼՊԻՒԼԵԱՆ

Բազարճըք, 18 Հոկտ. 97

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ. — Օսմ. եւ Հելլէն պատուիրակներն երէկ իրենց ԺԴ. նիստը կազմեցին Խարիճիյէի մէջ եւ զբաղեցան հաշտութեան դաշնագրոյն միացեալ չորս յօդուածոց քննութեամբ։

ՀԵԼԼԷՆ ՊԱՀԵՍՏՆԵՐ. — Իգտամ կ'հերքէ Աթէնքէ Նոյեմ. 6 Թուով ուղղեալ այն հեռագիր թէ Օսմանցիք բանտարկեր են Թրիխալա վերադարձող երկու հարիւր հելլէն պահեստի զինուորներ։

ՀԱԿԱԿՇՌՈՒԹ յանձնաժողովը, գերման պատուիրակ Մ. Դեգոայի առաջարկութեամբն էր որ որոշեց մնավաճառները քննելու խնդիրը։ Մ. Դեգոա առաջարկեց նաեւ որ եւրոպացի պատուիրակները նախ իրենց մէջ որոշեն հակակշռի ձեւն եւ յետոյ համաձայնին ելմտական նախարար Մ. Սըրէյդի հետ, սակայն այս վերջինը մերժեց. ըսելով որ նախապատրաստական գումարմանց իր ներկայութիւնն անհրաժեշտ է։ Իտալեան պատուիրակն եւ յետոյ միւսներն համակարծիք գտնուեցան նախարարին։ Անգլ. պատուիրակը կարծիք յայտնեց թէ յանձնաժողովոյ պարտականութիւնն է միայն գրաւել հրաշխաւորելու այն եկամուտներն որք յատկացուած են հին եւ նոր պարտուց տոկոսներուն եւ գլխաւորներուն և թէ երկրին ելմտից միջամտել իրենց ձեռնհասութենէն դուրս է։

ԹՈՐՓԻԼՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ. — Ցունաստանի ծովային պաշտօնատան մէջ կազմեալ յանձնաժողովն սկսաւ քննել առանց պատրոյգի Թորփիլներու խնդիրը։ Առաջին վկան էր նաւային սպայ Քանելոբուլօ որ ի ներկայութեան ամբաստանելոյն՝ նաւային սպայ Րաֆգոբուլոսի, յայտարարեց թէ թորփիլներն ընդունելու ատեն բնաւ չքննուեցան. միայն տրուած հրամաններու համաձայն զայնս համբեցին։ Ուրիշ վկայ մը Մ. Բոպոցանոս, որ հիւանդութեան պատճառաւ բացակայ էր, նամակաւ հաստատեց Քանելոբուլոյի ըսածները։ Ուրիշ վկաներ ի նպաստ Րաֆգոբուլոյի խօսեցան։ Մ. Ջուքալիս յայտարարեց թէ Սալամինայի նաւարանին ճարտարագէտն ըսեր է սպայի մը որ թորփիլներուն պատրոյգ չունենալը ճարտարագէտ Անաստասիու գիտէր։ Նաւային պաշտօնատունն ալ իր կողմէ քննութեան ձեռնարկելով բացատրութեան հրաւիրեց Անաստասիու ճարտարագէտն իբրեւ դէր-անօրէն Թորփիլներու։ Կ'ըսուի թէ քննիչ յանձնաժողովոյ նախագահ Միաուլիս պիտի երթայ իմանալու յայտարարութիւններն Եօրկիոս իշխանին որ Թորփիլներու անօրէնն է։ Այս առթիւ արքայական հրամանագիր մը պիտի տրուի։

ՑՈՒՆԱՍՏԱՆԻ Երեսփ. ժողովը բոլոր կուսակցութիւններէն յանձնաժողով մը պիտի կազմէ պատերազմին վրայ քննութիւններ կատարելու։

— Դատական նախարարութեան 1898ի ելմտացոյցի ծախուց գլխոյն վրայ 450,000 դրախմիի յաւելում եղաւ, որովհետեւ դատական պաշտօնատան մէջ բարենորոգումներ պիտի ըլլան եւ դատաւորաց ամսաթոշակները պիտի աւելնան։

—Մ. Տէլեանիսի կուսակցութեան հաւատարիմ մնացող երեսփոխանաց թիւն է 112։

—Նախարարաց Խորհուրդը վաւերացուց զինուորական նոր օրինագիծն, ինչպէս նաեւ նոր վարկերն անոր գործադրութեան համար։

—Նաւային սպայ Քրէզիս ծրագիր մը տուաւ ծովային պաշտօնատան ի մասին նաւատորմին գործողութեանց Բրեվէզայի առջեւ։

Բ. ԴՈՒՌԸՆ հրաման տուաւ Սալոնիկի կուսակալութեան որ Բանէլէնիքը Ընկերութեան շոգենաւք անարգել մտնեն նաւահանգիստները։

ԲԱԴՐԱՄԻ բանտին մէջ չորս չարագործներ կապի բռնուելով, երեսուն չափ ուրիշ բանտարկեալներ ալ դաշոյն ի ձեռին մասնակցեր են։ Մին սպաններ եւ ուրիշ մը ծանրապէս վիրաւորուեր է։

ՄԵՆԱՄԱՐՏ.—Անցեալ ՇԲ. օր Աթէնքի մէջ Ֆրանսացի մը եւ Իտալացի մը, որք պատերազմի պահուն Հելլէնական Լեգէոնին մէջ իբրեւ սպայ ծառայած էին, մենամարտեցան։ Շարժառիթն էր Ֆրանսացիին հրատարակած մէկ տետրակն որով հելլէն սպաները քննադատած է։ Իտալացին աջ թեւէն ծանրապէս վիրաւորուեցաւ։

ԱՆԳԼ. ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ.—Մր. Չէմպըրլէյն, ինչպէս երէկ ծանուցինք, Կլասկովի մէջ ատենաբանութիւններ ըրաւ համալսարանին տեսուչ կարգուելու առթիւ։ Գաղթային նախարարը խօսելով Անգլիոյ դաշինքին Արեւելեան խնդրոյ մէջ հետեւած քաղաքականութեան վրայ, ըսաւ.— «Լ. Սալզպըրրի ինչ որ կարելի էր ըրաւ որպէս զի Ցունաստան գերծ մնայ աղէտալի հետեւանքներէն պատերազմի մը որուն յիմարաբար ձեռնարկուած էր։ Թագուհւոյն կառավարութիւնը չէր կրնար գործօն կերպով միջամտել Արեւելեան խնդրոյն, նոյնպէս Եւրոպական Ներդաշնակութենէն ալ չէր կարող բաժնուիլ։ Լ. Սալզպըրրիի քաղաքականութիւնը բոլորովին համապա– [illegible]. Ընդդիմադիրք, որք միջամտութիւն կը ջատագովէին այնպիսի ժամանակ մը ուր անկարելի էր միջամտել, դատապարտեցին կառավարութիւնն [illegible]ղութեան յոյսերով միջամտեց։ Այսպէս կառավարութիւնը Սուտանի և Արեւ. Ափրիկէի մէջ միջամտեց վերջ տալու խժդժութեանց։ Ընդդիմադիրք այն ատեն վախ յայտնեցին թէ մի գուցէ երկիրն իր կարողութենէն վեր գործի մը ձեռնարկէ։ Իրենց այս հակասական ընթացքէն կարելի է դատել անկեղծութիւննին։ Ի՞նչ պիտի շահէր երկիրն եթէ ընդդիմադիրք արդի կառավարութեան տեղ անցնէին։ Ընդդիմադիրք անշուշտ պիտի ուզէին Թողուլ զՉիդրալ, և Միջերկրականի այլ և այլ տեղեր. պիտի հրաժարէին Ափրիկէի երկրաց մէջ մեր օրինաւոր բաժինէն եւ գէշ աչքով մը պիտի տեսնէին մեր մարտանաւերուն և ցամաքային զօրաց թուոյն աւելնալը։»

—Միւս կողմէ Նորուիչի մէջ Մր. Պալֆուր այսպէս խօսեցաւ Արեւելեան խնդրոյ վրայ.— «Այսօր կրնանք չափել ծանր պատասխանատուութիւնն այն անխոհեմներու որք զՑունաստան քաջալերեցին կամ մղեցին Թուրքիոյ դէմ պատերազմելու։ Ցունաստան իր ելմտական ու զինուորական աղէտներէ տկարացած, հաւանօրէն անկարող ըլլայ Արեւելքի մէջ խաղալու այն դերն որուն կ'րաղձային իր լաւագոյն բարեկամք։ Թուրքահելլէն պատերազմին հետեւանքներն Եւրոպայէ դուրս զգացուեցան։ Անգլիա դժուարութեանց կ'հանդիպի Հնդկաստանի և Աֆղանստանի սահմանագլխուն վրայ։»

ԷԹՆԻՔԷ ԷԴԷՐԻԱ.—Հելլէնք այժմ էթնոքդոնիքէ (ազգին կործանիչը) կը կոչեն Էթնիքէ Էդէրիան, որ Ցունաստանի աղէտներուն պատասխանատու հեղինակներէ մին է։ Էթնիքէ չուզեր լուռ մնալ և խաւարիլ. կ'ծանուցանէ թէ ի մօտոյ պիտի հրատարակէ կարգ մը պաշտօնագրեր որոց պարունակութիւնք եթէ պէտք եղածին պէս ապացուցուին, ահագին տպաւորութիւն մը պիտի գործեն Աթէնքի մէջ և քաղաքական իրական գայթակղութիւն մը յառաջ պիտի բերեն։ Էթնիքէ կ'յայտարարէ թէ առանց «պաշտօնական Ցունաստանի» գիտութեան ո եւ է բան չէ ըրած եւ որոշում չէ առած, եւ թէ Ընկերութեան բոլոր գործերը Նախագահ Տէլեանիսի կառավարութեան հաւանութեան արժանացած եւ կամ անոր կողմէ ներշնչուած էին։ Ընկերութիւնն ասկէ զատ տարօրինակ յայտարարութիւններ ալ կ'ընէ ըսելով որ վերջին պատերազմին դժբախտ հետեւանքը պիտի չկասեցնէ զինքը։ «Այս պատերազմ, ընդհակառակն, դաս մը եղած եւ ցոյց տուած է լրանալի պակասները, սրբագրելի թերութիւններն և զգուշանալի սխալները։ Էթնիքէ Էդէրիա այժմ ամենէն աւելի եռանդով պիտի ջանայ առաջ տանելու իր նպատակը։»

ՕՏԵՍԱՅԷ կ'հեռագրեն թէ Կրետէ գտնուող ռուս զօրաց մէջ ժանտատենդ երեւան ելեր է։

ԹԵՍԱԼԻԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՔ. — Աթէնքէ Նոյեմ. 8 Թուով կ'հեռագրեն թէ Թեսալացի գաղթականաց վերադարձին յատուկ որոշմագիրն ստորագրուեր է։ Արձակեալ պահեստի զօրաց մուտքն արգիլուած է։ 1600է աւելի գաղթականներ իրենց տեղերը դարձած են։ Օլգա թագուհին Եւբէա գացեր է՝ Թեսալացիներու յատուկ նպաստներով։ Ի Տոմոքո գումարեալ յանձնաժողովէն լուր առնուեր է թէ Ալմիրոսի համար գացող գաղթականաց ամբողջովին վերահաստատուելէն յետոյ, Վոլոյի ճամբով ալ գաղթականաց վերադարձը պիտի սկսի։ Կառավարութիւնը մարտանաւ մը յատկացուցեր է գաղթականաց։ Վոլոյէ անցնելիք գաղթականաց թիւն 50,000 կ'հաշուուի։ Վոլոյի մէջ փուռեր հաստատուեր են գաղթականաց համար։ Եպիրացի գաղթականք ալ Արդայէ ճամբայ ելեր են իրենց տեղը դառնալու. անոնցմէ մինչեւ հիմակ 3000 հոգի դարձեր են 8700 արջառով։

ՀԵԼԼԷՆ կառավարութիւնն որոշեց Կ. Պոլիս ղրկել երրորդ պատուիրակ մը Մ. Տուրուդի, նախկին դիւանագէտ և անդամ Թեսալիոյ գաղթականաց վերադարձի յանձնաժողովին։ Մ. Տուրուդի, որուն սոյն յանձնաժողովին մէջ պիտի յաջորդէ Եանեայի նախորդ հելլէն հիւպատոս Մ. Տօքոս, պիտի գործակցի Մավրոկորտադո իշխանին և Մ. Սդէֆանոսի։

ԱԹԷՆՔԷ կ'գրեն թէ գերման դեսպանը պաշտօնապէս ծանուցեր է արտաքին գործոց Նախարարին թէ օսմ. հիւպատոսք Ցունաստան պիտի մտնեն։ Հետեւաբար արքայական հրամանագիր մը ետ առեր է այն հրամա– [illegible] միջոցին օսմ. հիւպատոսաց հրամանագիրք ետ առնուած էին։ Հրաման տրուեր է իշխանութեանց պաշտօնապէս ճանչնալ օսմ. հիւպատոսներն եւ դիւրութիւններ ընծայել անոնց պաշտօնի կիրառութեանը միջոցին։

ՑՈՒՆԱՍՏԱՆԻ ներքին գործոց նախարարութիւնն օրինագիծ մը պատրաստեց ոստիկանութեան վերակազմութեան համար։ Օրինագիծը պիտի մատուցուի Երեսփ. Ժողովին։

ԳԵՐՄԱՆ գրագէտ Ակոստոս Վէտերլէյ, որ երկար ատենէ ի վեր Պիրէոն կ'գտնուէր, հրաման ստացաւ Գերմանիա դառնալու՝ Իզմիր և Սելանիկ հանդիպելով։

Մ. ԶԱՅՄԻՍ ընդուներ է Թեսալացի գաղթականաց պատգամաւորութիւն մը որ խնդրեր է կա՛մ կառավարութեան սնտուկէն և կամ սպանքներէն փոխառութիւն մ'ընել իրենց տեղերը դարձող Թեսալիացիներուն անհրաժեշտ պէտքերն հոգալու։ Մ. Զայմիս ըսեր է թէ կառավարական գանձը կարող չէ օգնութիւն ընել. այսու հանդերձ կարօտ վաճառականաց ու կալուածատէրաց ցուցակն ուզեր է։

ԹՐԻԽԱԼԱՅԻ Գայմագամ Նէճիպ պէյ երկու Իսլամէ եւ երկու Ցոյնէ յանձնաժողով մը կազմեր է՝ հսկելու վերադարձող գաղթականաց տեղաւորման։

ԿՐԵՏԷ.—Հելլէն լրագիրք կ'ծանուցանեն թէ անցեալ շաբթու Հանեայէ 220 և Գանտիայէ 600 անգլիական զինուորք մեկներ են։ Սապաճ կ'իմանայ թէ անգլ. երկու գումարտակներէ մին ետ առնուելով մէկ գումարտակ միայն պիտի մնայ։ Այժմ Հանեայի և Հալէպայի մէջ վեց Տէրութեանց զինուորներէ ամենքն ալ կան։

—Հանեայէ կ'հեռագրեն թէ, կ'ըսեն թուրք լրագիրք, Ճեւատ փաշայի ձեռք առած միջոցներով կղզւոյն Իսլամք կատարեալ անդորրութեան մէջ կ'գտնուին։

—Իտալեան զօրաց մէկ մասն հիւանդանալով իրենց երկիրը դարձան։ Անոնց տեղ ուրիշներ պիտի ղրկուին։

—Կայս. Իրատէ մը հրամայեց որ Կրետէի որբերը պատսպարուին Թէրսանէի ու Թոփհանէի արհեստից դպրոցներուն, Սուլթանիյէ վարժարանին եւ նահանգաց Համիտիէներու մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ Ց'ԱՆԳԼԻԱ. — Երեսփոխանական նոր ընտրութիւն մ'ալ կատարուեցաւ Լանքաշայրի մէջ, պահպանողական երեսփոխան վախճանեալ Թոմաս Ֆիլտէնի տեղ։ Այս երրորդ ընտրութիւնն է որ կ'կատարուի երեք շաբաթէ ի վեր։ Արդիւնքը միւս երկու ընտրութեանց պէս ազատականներուն յաջողութիւն պատճառեց։ Ազատական Տըրըսթ 5964 քուէով ընտրուեցաւ ընդդէմ 5664 քուէի զոր ստացաւ պահպանողական Մ. Քլ. Թայմզ։ Այս ձախողումն արդիւնք կ'համարի կառավարութեան ընթացքին որով մերժեց Ամերիկայի արծաթ դրամի կուսակիցներուն առաջարկութիւնը՝ վերաբանալու Հնդկաստանի փողերանոցները։ Ի Լանքաշայր կարգ մը երկաթատեղեններ կան քաղաքական եւ ճարտարագործական առաջնակարգ դասակարգին մէջ։

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Ց'ԱԼԶԱՍ ԼՈՐԷՆ.— Մեցէ կ'հեռագրեն թէ 25 տարեկան Օրոնցի (գերմանական Լորէն) Մ. Բոնգան Բոնդէ որ կալուածատէր ի Մուլավրոն (Նանսիի մօտ), անցեալ կիրակի իր կնոջ հետ Մեց երթալու ատեն սահմանագլխոյն վրայ ձերբակալուեր է գերման քոմիսէրին կողմէ, որ ծանուցեր է թէ իբրեւ դասալիք 40 օր պիտի բանտարկուի եւ յետոյ գերման զօրագունդի մը մէջ պիտի մտնէ իր զինուորական ծառայութիւնը կատարելու։ Մ. Բոնդէ բանտարկուեր է։ Իր հայրն 1871ին երբ Ալզաս-Լորէնի ժողովուրդը պարտաւորեցաւ ֆրանսացիութիւնը կամ գերմանացիութիւնն ընտրելու, ֆրանսացիութիւնն ընդունած էր։ Մ. Բոնգան Բոնդէ քանիցս Գերմանիոյ թողուած երկիրը գացած էր անարգել։ Ի Նանսի ֆրանս. զօրագունդի մը մէջ վարած է զինուորական ծառայութիւնը։ Վերջին լուրի մը նայելով Մ. Բոնդէ անցեալ ՆՇ. ազատ արձակուեր է։ Մեցի ոստիկանութիւնը ճանչցեր է թէ անուան շփոթութիւն կայ Մ. Բոնդէի եւ հօրեղբօրորդւոյն միջեւ որ 1885ին գաղթած է։ Մ. Բոնգան Բոնդէ սխալմամբ դատապարտուած էր։ Նոտայ մը երաշխաւոր եղեր է Մ. Բոնդէի. վճիռը պիտի վերաքննուի. գերման իշխանութիւնք վաւերական կ'ճանչնան Մ. Բոնգան Բոնդէի ֆրանսացիութիւնը։

—Լորէնի սահմանագլխոյն վրայ ուրիշ ձերբակալութիւն մ'ալ կատարուեցաւ անցեալ ԴՇ.։ Պուրսոն անունով բանջարավաճառ մը՝ 36 տարեկան՝ ամուսնացած և վեց զաւկի տէր, սահմանագլխոյն վրայ ձերբակալուեցաւ, երբ Վիլլըրիւրքէ՝ Րիւսանժ (Լորէն) կ'երթար բանջարեղէն գնելու։ Բոնդէի նման, Պուրսոն ալ ֆրանսացի է. զի հայրն 1871ին ֆրանսացիութիւն ընդունած էր։ Պուրսոն զինուորական ծառայութիւնը կատարած է ֆրանսական բանակին մէջ։ Լրագիրք կ'քննադատեն գերման կառավարութեան այս ընթացքն, ըսելով որ ֆրանսացիութիւն ընդունողները ազատ կ'մնային ցարդ այդ ձերբակալումներէն։ Խնդիրը բաւական կարեւոր է, կ'յաւելուն, եւ ֆրանս. կառավարութիւնը պէտք է քննութիւն կատարէ եւ կարեւոր լուծումը տայ։

ԳԵՐՄԱՆԻՈՅ կայսրն ու կայսրուհին ներկայ գտնուեցան զօր. Պիւլովի յուղարկաւորութեան։ Զօրավարը ձիէն ինկնալով մեռած է։ Վիլհէլմ Բ. դագաղին հետեւեցաւ արտաքին գործոց նախարար Ֆոն Պիւլովի հետ, որուն եղբայրն էր հանգուցեալը։

ՀԱՐԱՒ. ԱՓՐԻԿԷ.— Անցեալ ՆՇ. Անգլիոյ ինքնավար Ընկերութեան հովանաւորութեան տակ տեղի ունեցաւ բացումը Պուլուվայոյի երկաթուղւոյն (մայրաքաղաք Մադապելէլանտի) որ այս քաղաքը կ'միացնէ Քէյպտաունի։ Ներկայ էին Հարաւային Ափրիկեան երեւելիք և Անգլիայէ գացած քաղաքական անձնաւորութիւնք, ի մէջ այլոց երկրախոյզ Սդէնլի։ Հարաւային Ափրիկէի բարձր քոմիսէր և Բարեյուսոյ կառավարիչ Սըր Ալֆրէտ Միլնըր և վարչապետ Սըր Ճ. Կորտոն Սբրիկ յատկապէս Պուլուվայօ գացած էին։ Միայն Մր. Սէսիլ Րոտս բացակայ էր։ Ասոր պատճառը հիւանդութիւնն էր կամ լաւ եւս պատշաճից օրէնքն յարգելու պէտքը։ Երկաթուղւոյ ընկերութեան դրամագլուխն, որ ամբողջացած չէ, երկու միլիոն անգլ. ոսկի պիտի ըլլայ։ Գծերուն շինութեան ծախքն իւրաքանչիւր 1600 մեդրի համար 3000 ոսկի եղած է։ Բացման հանդէսին առթիւ ինքնավար Ընկերութիւնը բազմաթիւ հողեր ի վաճառ պիտի հանէ։ Հանդէսին առթիւ թատերական ներկայացումներ, արշաւներ տեղի ունեցան։ Անցեալ ԴՇ. բացման առջի օրը, արկած մը պատահեցաւ այցելուներ կրող մասնաւոր կառախումբի մը մէջ. ելեկտրական լոյսի գործիներ պարունակող վակոն մը բռնկելով բոլորովին այրեցաւ. երեք պաշտօնեայ վիրաւորուեցան։

ՄԱՀՈՒ ՊԱՏԻԺ.—Անցեալ Ուր. Գահիրէի մէջ պիտի կախուէր Լինգոլնշայրի զօրագունդէն անգլիացի զինուոր մը՝ Ճէյմս Ուօլքըր՝ որ իր ընկերներէ մին սպաննած ըլլալով մահուան դատապարտուած էր, բայց վերջին վայրկենին 150 ստորագրութեամբ աղերսագիր մը տրուեցաւ Լորտ Քրոմըրի որ հեռագրաւ հաղորդեց ի Լոնտոն։ Աղերսագրոյն մէջ ըսուած է թէ զինուորական ատեանը ձեռնհաս չէ այս գործին մէջ վճիռ արձակելու, որովհետեւ տեղը բրիտանական ստացուածք չէ եւ թէ Քափիդիւլասիոններն հոն ի գործադրութեան են։ Ոճիրը քաղաքային է եւ ոչ թէ զինուորական, և բանակն իրապէս գործօն ծառայութեան մէջ չըլլալով, բանտարկեալը պէտք էր դատել անգլ. հիւպատոսարանի դատարանին առջեւ։

ԱՆՏՐԷ Ի ԲԵՒԵՌ.— Շուէտի կառավարութիւնը փափաք յայտնեց որ զԱնտրէ փնտռելու համար Սբիցպէրկ ղրկուելիք մարդոց ծախուց կէսն ինք հոգայ, բայց Նորվեկիա պատասխանեց թէ ինք միայն պիտի հատուցանէ այդ ծախքերը։

ՎԵՑ ՄԻԼԻՈՆ ԱՆԳԼ. ՈՍԿԻՈՑ ԳԱՆՁ ՄԸ.— Նիւ Եորքի թերթ մը կ'պատմէ թէ անգլ. Իմբէրիէլ մարտանաւն որ Խաղաղականի Քոքօ կղզիները (Բանամայէ 200 մղոն հեռու) գացած էր հոն թաղուած գանձ մը գտնելու, Վիքդորիա (Բրիտանական Քոլոմպիա) հասեր է։ Մարտանաւուն սպայք յայտարարեր են թէ այս պատմութիւն ճիշդ է եւ թաղուած գանձը վեց միլիոն անգլ. ոսկւոյ կ'հասնի։ Իմբէրիէլ փոխադրեր է այդ գումարին կէսն՝ ոսկի ու գոհարեղէն։ Կղզւոյն մէջ նաւային զօրքեր ձգեր է գանձուն միւս կէսին վրայ հսկելու, մինչեւ որ ուրիշ անգլ. նաւ մը ղրկուի զայն փոխադրելու։

ՆԻՒ ԵՈՐՔԷ կ'հեռագրուի թէ Մ. Եուսուֆ Եազըճը՝ նախկին ընդհ. հիւպատոս Թուրքիոյ ի Պոստըն, 200,000 տոլարի գումար մը իւրացուցեր է Բարիզի Տէրիէս և Վիյյարտի տեարց հարստութենէն, որուն աւանդապահն էր։ Մինչեւ որ քսան օրէն պաշտպանողականը պատրաստէ, ամբաստանեալն ազատ թողուեր է 75,000 տոլարի երաշխաւորութեամբ։ (Մոնիթէօր)

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ.— Հեռագիրն հաղորդեց թէ լատինական դրամական միութիւնը կազմող հինգ տէրութիւնք, Ֆրանսա, Իտալիա, Պելժիա, Զուիցերիա և Ցունաստան, պայմանագիր մ'ստորագրեր են առաջուց որոշեալ չափէն աւելի մանր դրամ կոխելու։ Գործին նախաձեռնութիւնը կ'պատկանի Զուիցերիոյ։ Մանր դրամներու աւելցուին հիմնուած է իւրաքանչիւր երկրի բնակչաց թուոյն վրայ, մարդ գլուխ մէկ ֆր.ի հաշուով։ Ֆրանսա՝ հաշուի մէջ դրած է բնակիչներն իր զանազան գաղթականութեանց, ուր մանր դրամի պէտքը խիստ զգալի է. հետեւաբար նոր պայմանագրութեան համաձայն, Ֆրանսա իրաւունք ունի 130 միլիոն ֆր.ի մանր արծաթ դրամ կոխելու։ Բայց պայմանագրութիւնը կ'տրամադրէ որ լատինական դրամական միութեան պատկանող իւրաքանչիւր պետութիւն՝ հրապարակի վրայ մեծ քանակութեամբ գտնուող 5 ֆր.նոցներու մէկ մասը մանր դրամի վերածէ։ Հակառակ այս սեղմիչ պայմանին, Ֆրանսա արտօնուած է իր աւելորդ 5 ֆր.նոցներէն միայն 127 միլիոն ֆր.ը մանր դրամի վերածել, եւ 3 միլիոն ֆր.ի արժէքով 2 և 1 ֆր.նոց և 50 սանդիմնոց մանրուկ կոխել ձոյլ արծաթէ, որմէ իբր մէկուկէս միլիոն ֆր.ի շահ մը պիտի ընէ. այս շահն ալ պիտի գործածուի մաշած ոսկի և արծաթ դրամները նորէն կոխելու։

ԲԱՐԻԶԻ ՍԱԼԱՅԱՏԱԿԻՆ ՎՐԱՅ. — Երեք ամիսն անգամ մը կ'հրատարակուի ձրի գործ հայթայթող գրասենեակներուն դիմողներու մէկ վիճակագիրը։ Հրատարակուած վերջին վիճակագրէն կ'տեսնուի, թէ տարւոյս երրորդ եռամսեին մէջ, 10,432 այրեր և 13,929 կիներ համագումար 24,361 անձինք գործ խնդրած են, որոց հազիւ 13,843ին կարելի եղեր է գործ հայթայթել, մնացեալք անգործ կ'թափառին Բարիզի սալայատակին վրայ։ Այս վիճակագիր տխուր խորհրդածութեանց նիւթ կ'հայթայթէ բարիզեան մամլոյն։ «Մէկզի թողլով այն պարագան, կ'ըսեն լրագիրք, թէ գտնուած գործերն առժամանակեայ են և ապագայ մը չեն պատրաստեր շատ անգամ, յայտնի է որ շատ աւելի թուով գործ փնտռողներ կան, որք չեն յիշուած քաղաքապետական տեղեկագրին մէջ։» Մեր մէջ եթէ այսօրինակ վիճակագիր մը պատրաստել կարելի ըլլար, քանի՞ պիտի հասնէր արդեօք մեր անգործ երիտասարդներու թիւը։

ՄԻԼԻՈՆԻ ՄԸ ԳՈՂՈՒԹԻՒՆԸ. — Ասկէ իբր ինն տարի առաջ Նիւ-Եորքի սեղանաւորական տան մը անօրէնը, Ֆորսդըր՝ փախուստ տուած էր, մէկ միլիոն ֆր.ի չափ գումար մը տանելով հետը։ Ապահովագրական ընկերութեան մը յանձնուեցաւ յանցաւորը ձերբակալելու հոգը, և զայն գտնողին 5000 տոլար պարգեւ տալ որոշուեցաւ։ Դիւրին է երեւակայել թէ այս գումար շատերու եռանդը կ'գրգռէր, ուստի ամէն կողմ փնտռուեցաւ յանցաւորը որ մինչեւ վերջերս անգտանելի մնացած էր։ Անգամ մը Լոնտոնի երաժշտական ակումբի մը մէջ նշմարեցին զայն, և նոյն իսկ լուսանկարն հանել յաջողեցան. բայց երբ իսկութեանը վստահ եղան, Ֆորսդըր աներեւոյթ եղած էր արդէն։ Վերջերս Ֆրանսացի ոստիկան մը ի Բարիզ Քրէտի Լիոնէի սրահին մէջ նշմարեց զայն և հետեւեցաւ անոր մինչեւ Նեօյլի ուր կ'բնակէր. բնակավայրն իմացուելուն պէս, խնդիրը տեղեկագրուեցաւ Ամերիկեան իշխանութեան, և Նիւ Եորքէ ի Բարիզ ղրկուեցաւ գաղտնի ոստիկան մը որ, Բարիզցի ոստիկանի մ'ընկերակցութեամբ, անցեալ ԵՇ. ձերբակալեց գողը։ Ֆորսդըր բանտ դրուեցաւ ուր պիտի մնայ մինչեւ որ արտաքսումի որոշուի։ Գալով 5000 տոլարի պարգեւին, այդ գումարը պիտի բաժնուի ոստիկանապետ Մ. Գոշֆոռի ծառայութեան տակ գտնուող 364 ոստիկաններու։ Այդ գումարին միայն գողը գտնող ոստիկանին չտրուելուն պատճառն այն կ'ըսուի թէ ոստիկանն ինքնակամ չէր աշխատեր գողը գտնելու, այլ տրուած հրամանի մը կ'հնազանդէր, հետեւաբար այդ հրամանին հնազանդող բոլոր ոստիկանք հաւասարապէս իրաւունք ունին պարգեւին։

«ՀԻՆ ՈՒԽԵՐ».— Մ. Ժորժ Օնէ, որուն «Կամքը» և «Տըրգ. Ուոմա» անուն գեղեցիկ վէպերն այնքան հետաքրքրութեամբ կարդացուեցան մեր թերթօնի բաժնին մէջ, վերջերս հրատարակեր է «Հին Ուխեր» անուն վէպին մէկ նոր տպագրութիւնը։ Ահա համառօտութիւնն անոր նիւթին։ Մ. Կիչար՝ ծերունի և խիստ հարուստ ամուրի մը՝ մեռնելով, հարստութիւնը կ'ձգէ իր ազգականներէն Մ. Ֆորդիւնէ Ռուսէլի և Օր. Գլէմանդին Կիչարի, պայմանաւ որ միասին ամուսնանան, և անոնցմէ ով որ հակառակի այդ ամուսնութեան, զրկուի ժառանգութենէ։ Արդ՝ եթէ Օր. Գլէմանդին կ'սիրէր զՄ. Ֆորդիւնէ, վերջինը ո՛չ ամուսնանալ կ'փափաքէր, և ոչ ալ մասնաւոր համակրութիւն մ'ունէր օրիորդին նկատմամբ։ Ամուսնութիւնը կ'նկատէր երկարատեւ տանջանք մը և զՕր. Գլէմանդինն ալ խիստ յաւակնոտ կ'համարէր. ուստի մերժեց այս ամուսնութիւնը։ Գլէմանդին սոսկալի ոխ մը պահեց անոր դէմ, և սկսաւ ամէն տեղ զրպարտութիւններ ընել անոր վրայ։ Մինչ այս մինչ այն Մ. Ռուսէլ բարեկամի մը զաւակը կ'որդեգրէ։ «Ի՞նչ, կ'ըսէ օր. Կիչար, չըլլա՛յ որ օրին մէկն իմ հարստութիւնս այս տղուն ժառանգել տալու դիտաւորութեամբ ըրած ըլլայ այս բանը։» Ուստի ինք ալ իր կարգին փոքրիկ աղջիկ մը կ'որդեգրէ, կ'գուշակէ՞ք թէ ինչ կ'պատահի 20 տարի վերջ։ Երկու որդեգրեալք իրարու կը հանդիպին և միեւնոյն վայրկենին կը սիրահարին. յաւիտենական պատմութիւն մ'է այս։ Օր. Կիչար խիստ ուրախ է այս սիրահարութենէն, որով կարող պիտի ըլլայ զՄորիս՝ Ֆորդիւնէի որդեգիրը՝ բաժնել անկէ։ Ուստի կ'յայտարարէ երիտասարդին թէ այն ժամանակ միայն կ'հաւանի իրենց ամուսնութեան, երբ հաստատապէս խօսք տայ թէ Ֆորդիւնէէ բաժնուելով իր տանը մէջ պիտի բնակի կնոջը հետ։ «Ընդունէ՛ պայմանը» կ'ըսէ Մ. Ֆորդիւնէ Ռուսէլ իր որդեգրին, «երբ Օր. Հէրմին (Օր. Կիչարի որդեգրուհին) քու կինդ ըլլայ, այն ատեն դու պիտի ըլլաս տէրը։» Ամուսնութիւնը կ'կատարուի. որոշուած է որ նոյն իրիկունն իսկ Մորիս առեւանգէ իր կինը. բայց Օր. Կիչար ժամանակին կ'իմանայ, և ինք Մորիսէ առաջ կ'առեւանգէ զՀէրմին զոր հեռաւոր գեղակի մը մէջ կ'փակէ։ Ռուսէլ և Մորիս, թափառաշրջիկի կերպարանք մտած կ'յածին այդ գեղակին շուրջը. թէեւ քիչ մը անճշմարտանման, բայց գրքին ամէնէն զուարճալի էջերը կը կազմեն անոնց այս շրջագայութիւնք

գլեակին չուրջը։ Շատ մը պատահարներէ ետք, վերջապէս Մորիս կ'յաջողի առևանգել իր կինն և Ռուսէլի յարկին տակ բնակիլ։ Ցաջորդ օրը նորէն կ'երեւայ Օր. Կիչար, որ կ'յայտնէ թէ եա չի կենար գաղափարէն։ Ռուսէլ, Կիչարի բարկութիւնն իջեցնելու համար մէկ միջոց միայն կ'գտնէ. գիւտցագնական որոշում մը կուտայ, կ'ձաւանի եա առնուլ քան տարիէ ի վեր տուած որոշումն, և... կ'ամուսնանան միասին։ Ինչպէս կ'տեսնուի, այս վէպը Ժորժ Օնէի գրական համբաւը բարձրացնելու հանգամանքը չունի, բայց գեղեցիկ և զուարթ էջեր կ'պարունակէ։

ՀԵՌԱԳԻՐԵՐ

ՊԵՐԼԻՆ, 8 Նոյ. — Ռայխսդակը պաշտօնապէս նիստ հրաւիրուեցաւ Նոյմ. 18/30 ին։

—Պապին Գերմանացւոց ուղղած վերջին չրջաբերականէն ի վեր, որ վշտացուց Բողոքականները, գերման կառավարութեան և Վատիկանի յարաբերութիւնք շատ ձգտեալ են։ Կ'ըսուի թէ մի քանի գերման երեսփոխանք, այս խնդրոյ մասին հարցում մը պիտի ընեն կառավարութեան։

ՄԻԼԱՆ. — Կոմս Կոլուխովսքի սիրալիր կերպով ընդունուեցաւ իտալիան վեհապետներէն։ Այս իրիկուն կ'մեկնի ընկերակցութեամբ Նիկրա կոմսին։

ՎԻԵՆՆԱ, 8 Նոյեմ. — Աւստրիոյ-Հունգարիոյ Պատուիրակութեանց ժողովին մէջ, որ պիտի գումարի Նոյեմ. 4/16ին, Կոլուխովսքի կոմսը պիտի պարզէ կառավարութեան արտաքին աշխարհավարութիւնն, և խիստ չահագրգիռ յայտնութիւններ պիտի ընէ Աւստրիոյ և Ռուսիոյ յարաբերութեանց վրայ։

—Երեսփ. Ժողովին մէջ, դեր-Նախագահ ֆոն Աբրահամովիչ վերջին նստին միջադէպերն ակնարկելով, պարսաւեց այն երեսփոխաններն, որք խորհրդարանական սկզբանց վնասող բացատրութիւններ գործածած էին։ Փափաք յայտնեց որ վիճաբանութեանց ձևը բարեփոխուի. (ծափահարութիւնք աջակողմէն, աղմուկ ձախակողմէն)։ Նիստը կ'շարունակուի։

ԲԱՐԻԶ.—Տրեյֆիւս անունը կրող ամբողջ ընտանիք մը՝ հայրը, մայրն եւ երեք փոքր աղջիկներ, անձնասպան եղան կիսավառ ածուխով։ Հայրը՝ դատապարտեալ հարիւրապետ Տրեյֆիւսի հօրեղբօրորդին է եղեր։

ՐԵՆԴԻՐՍԲՈՒՐԿ, 8 Նոյեմ.— Լրագիրք կ'գրեն թէ Էյմիածին մօտ Օրկով քաղաքին չրջականերն աւազակներ կողոպտեր են անգլիացի երկու զբօսաշրջիկ։

Կ'յիչեցնենք մեր գաւառացի յարգոյ ընթերցողաց թէ պիտի դադրեցնենք լրագրոյս առաքումն այն ամէն բաժանորդներու որոց պայմանաժամը կ'աւարտի Բիւզանդիոնի Ա. տարեշրջանին հետ, եթէ Նոյմ. ի Ա. չաբթուն մէջ ստացած չըլլանք իրենց նոր բաժնեգները։

Այս զեկուցումը կ'ընենք՝ տպեալ ազդագրերու այլ եւս պէտք չթողլու համար։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Այս քանիերորդ անգամն է որ գանգատագիր կուգայ մեզ Տիարպէքիրի առաջնորդական տեղապահին վըրայ։ Այս չաբթու ալ երկու տարբեր աղբիւրէ եկաւ։ Բայց մեք չենք հրատարակեր, խորհելով որ, նախ, այնչափ գաւառներ անհովիւ մնացեր են որ չարժեր Տիարպէքիրի պէս կարեւոր գաւառի մը մէջ ալ խնդիր յարուցանել, և երկրորդ, ո՛ գիտէ որոց չահերուն դպեր է Տ. Եզեկիէլ Վրդ., բան մը որ անխուսափելի է, զի գանգատի գլխաւոր առարկան նպաստի բաշխումին չուրջը կ'դառնայ։ Մեր մէջ, ուր ստակ կայ, հոն կռիւ ալ պակաս չէ. զի մանաւանդ դրամի գործածումին մէջ ճշտութիւն, ծայրագոյն պարկեշտութիւն ու կանոնաւոր հաշուետուութիւն արմատացած սովորութիւններ չեն մեր մէջ։ Այս ամէն նկատմամբք դեռ շատ բաներ ունինք սորվելու Արեւմտեան ազգերէն։ Տիարպէքիրի տեղապահին դէմ գանգատներն ասոնք են. (1)․ Նպաստներն ըստ կամս բաշխեր է. (2)․ Ցեառոյ մարդու հաշիւ չէ տուեր․ (3)․ Նպաստի գումարէ՛ն վար դրեր է իր ամսական և առաջնորդարանի պաշտօնէից ամսականները. (4)․ Նպաստի գումարով կահաւորեր է առաջնորդարանը․ (5). Դպրոցի հոգ բնաւ չի տանիր, որով աղջիկները լասին մայրապետներուն կ'յանձնէ, եւ շատ մը մանչ տղաքներ, փողոցները թափառելով, անառակութիւն կ'սորվին․ (6). Երբեմն երբեմն, այն ալ միայն կիրակի օրեր, եկեղեցի կ'իջնէ, բայրն նիւթական իմաստով եպիսկոպոսական փառքով փայլելու համար․ (7). Կ'աշխատի եպիսկոպոսութեան վկայական ձեռք բերել Կեդրոնի Կրօն. Ժողովէն, և Էջմիածին երթալ։ Գանգատողները կ'յարեն որ եթէ Տիարպէքիրցիք աւելի ուժգին ձեւով մը չեն բողոքեր, իրենց առեւտրական տագնապին ու տնտեսական անձկութեան մէջ ազգային գործերով զբաղելու ժամանակ չունենալուն համար է միայն։ Կ'պատասխանենք թէ քանի որ Տիարպէքիր հիմակ օրինաւոր Ազգ. Վարչութիւն ունի, այս ամէն կէտերու վրայ, եթէ իրաւացի են, իրենք կըրնան պէտք եղած բացատրութիւնները պահանջել տեղապահէն, և ի հարկին դիմել ի Պատրիարքարան։ Բայց Պատրիարքարանի արդի տրամադրութիւններուն նայելով, գաւառներէն առաջն. տեղապահ հեռացնելու բնաւ կամք չկայ, բայց եթէ յոյժ հարկեցուցիչ պարագայի առջեւ։ Հետեւապէս, Տիարպէքիրցիք ալ աղէկ կ'ընեն եթէ իրենց լաթերն իրենց մէջ լուան Եփրատի կամ Տիգրիսի ջուրով, եւ խնդիր չհանեն։ Մեք հօս մեր չուրջ, մեր քթին տակ՝ ազգային չրջանակի մէջ՝ անանկ բաներ կ'տեսնենք որոց չենք ուզեր կամ չենք կրնար դարման տանիլ, եւ յուսալ որ Տիարպէքիրի ազգայիններուն մէջ պատահած զեղծումները դարմանենք՝ չափէն աւելի միամտութիւն կ'ըլլար։

—Տիարպէքիրցի նամակագրին մէկն ալ բարկացեր է Բիւզանդիոնին թէ ինչո՞ւ գրեր ենք որ «Երուսաղէմի վանքէն ղրկուած վարդապետներն աղէկ կ'գործեն»։— «Ամենեւին անանկ չէ» կ'ըսէ, և անոնց Երուսաղեմացի ըլլալն իսկ ապացոյց կ'համարի որ լոկ վանական մարդիկ են, անփորձ, անհոգ, կամ չափազանց փառասէր եկեղեցական։ Կ'յիչեցնենք մեր գայրացկոտ թղթակցին թէ Երուսաղեմացի վարդապետներէն ցարդ երկուքին համար միայն գանգատ եկած է մեզ, այն ալ չենք գիտեր ո՛ր աստիճան իրաւացի, այն է Տիարպէքիրի և Ամասիոյ տեղապահներուն դէմ. իսկ Կեսարիոյ առաջնորդին ու Եդեսիոյ տեղապահին համար գովութիւն միայն լսեցինք, և Բաղէշի ու Երզնկայի տեղապահներն այնքան նոր են որ ցարդ գոհունակութեան գրեր միայն կ'առնունք։ Մինչեւ ցնոր տնօրէնութիւն, Երուսաղեմացիներուն նկատմամբ մեր կարծիքը փոխելու պատճառ մը չենք տեսներ։

—Տփղիսէ հետեւեալները կ'գրեն.

«Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը, գաղթած Հայերի համար վարձել է Հաւլաբարում Պ. Նարիմանովի տունը և հոկտեմբերի 8ին առաջարկել է քաղաքային ճարտարագէտներին հոգ տանել յարմարեցնելու յիշեալ տունը գաղթականների բնակութեան համար։»

«—Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն յանձնել է նոյն վարչութեան անդամ Իշխան Արղութեանին բանակցութիւններ սկսել գաղթականներին օժանդակելու համար ընտրուած յանձնաժողովի և Հայոց Բարեգործական Ընկերութեան հետ, իր կողմից եւս միջոցներ ձեռք առնելով գաղթականների ծանր վիճակը թեթեւացնելու համար։»

—Երէկ Կրօն. Ժողովն իր չաբաթական նիստն ըրաւ Պատրիարքարանի մէջ, Նախագահութեամբ Ս. Պատրիարքին եւ ատենապետութեամբ Ցովհաննէսեան Տ. Գրիգորիս Սրբազանի, ի ներկայութեան անդամոց մեծամասնութեան, եւ զբաղեցաւ կարգ մը խնդիրներով, որոցմէ կ'հրատարակենք հետեւեալները։— 1.— Ս. Պատրիարքը Թափուր վիճակաց եւ առաջնորդութեանց մէկ նոր վիճակագրութիւնը պատրաստելով, անոնց ամէնուն յարմար առաջնորդական տեղապահցուներու եւ Պատր. Փոխանորդութեան ընտրելիներու ցուցակ մը կազմած ըլլալն յայտնեց Կրօն. Ժողովոյն, որ պիտի ներկայացնէ Խառն Ժողովոյ յառաջիկայ նստին, ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն։ — 2.— Խարբերդու Առաջնորդարանէն տեղեկագիր մը ղըրկուած էր որ խառն ամուսնութեան մը կ'վերաբերէր. այն է, այրն ասորի, իսկ կինն հայ։ Ասոնք ամուսնանալէ ետք, իրարմէ բաժնուած են, եւ այրը գացած նորէն ամուսնացած է։ Կնոջը համար տնօրինութիւն մը խնդրուած է Կրօն. Ժողովէն։ Ցետ խորհրդակցութեան, տեղեկագիրն անբաւական համարուելով խնդրոյն լուսաբանութեան, որոշուեցաւ ինչ ինչ կէտերու վրայ բացատրութիւններ ուզել Խարբերդի Առաջնորդ Բագրատունի Տ. Պետրոս Ծ. վարդապետէն.— 3.—Լիմ Անապատի միաբաններէն Գաբրիէլ վարդապետ Գալըջըեան, նամակ մ'ուղղելով, Անապատականաց նիւթական տխուր կացութիւնը կը նկարագրէ ու հետեւեալ տողերով կը վերջացնէ. «Եթէ Պատրիարքարանէն օժանդակութիւն չհասնի սուրբ մենաստանիս, այսօր կայ Ս. Անապատս, վաղը չկայ։ Այսքան իմացէք, որ փոքր միջոց մը ետև, բու աւերակաց պիտի դառնայ։ Տէրն ինք այց առնէ Ս. Տանս»։ Կրօնական Ժողովն հարկ եղածը տնօրինեց։—4.—Ռոտոսթոյի առաջ. տեղապահ Պաղճեան Տ. Բարթուղիմէոս Ծ. վարդապետի հրաժարեցուցման խնդրով չուղեց զբաղիլ, քանի որ Ռոտոսթոյի Գաւառ. Ժողովէն դեռ պաշտօնապէս բան մը հաղորդուած չէր այս մասին։—5. Հաւլիկեան Տ. Ցովհաննէս վարդապետի մատուցած խնդրագիրը նկատողութեան չառնուեցաւ։—6. Այլ և այլ թեմերէ կ'րոտեկոց հաւաս նպաստներ խնդրուած էին։ Խնդրագրերը Կեդրոնական Խնամակալութեան ղրկուեցան։ —7.—Զանազան տեղերէ եկեղեցական մատեաններ և դպրոցական դասագրքեր ուզած էին։ Կրօն. Ժողովը Գ. Հանական Ցանձնաժողովոյն յղեց։—Զբաղեցաւ կարգ մը ամուսնական խնդիրներով։—Ժողովը փակեցաւ ժամ 10'ին։

—Հայ Հռովմէականաց Պատրիարք Գերերջ. Տ. Ազարեան Սրբազան երէկ Բ. Դուռն երթալով Մեծ-Եպարքոս Խալիլ Րիֆաթ փաշայի հետ տեսակցեցաւ։

—Հիւանդանոցի նորակազմ Հոգաբարձութեան ինն անդամներէն միայն Կիւլպէնկեան Պատրիկ եւ Ռէնձեան Մարգար էֆ.ներն անձամբ պատասխանած էին երէկ Ս. Պատրիարքի հրաւէրին, գալով ի Պատրիարքարան, եւ առանձինն տեսնուելով անոր հետ։ Կը լսենք թէ՝ Հոգաբարձութեան անդամներէն չորս հոգի հրաժարագիր ղրկեր են Ս. Պատրիարքին, որ չէ ընդունած, եւ նորէն հրաւիրագիր պիտի ուղղէ։

—Առաջիկայ ուրբաթ Խառն Ժողովն ի նիստ հրաւիրեալ է Ղալաթիոյ Խորհրդարանը։

—Ցանես. Խորհրդոյ ատենապետ Փափազեան Նշան էֆ. երէկ Ս. Պատրիարքին հետ առանձին խորհրդակցութիւն մ'ունեցեր է, Խորհրդին կողմէ պատրաստուած Ելմտացոյցին երեսի վրայ թողուելուն համար։

—Հայագէտ Տիմիթրիոս Զօլաքիտէս էֆ., երէկ Պատրիարքարան գալով, Ս. Պատրիարքին հետ տեսութիւն մ'ունեցաւ խնդրոյ մը նկատմամբ, ի դիմաց Ցունաց Ամն. Ս. Պատրիարքին։

—Դումգափուէ հետեւեալ զուարճալի մանրադէպը կ'գրեն մեզ. «Մենձաղայի մը կողմէ Թըքերէնի քարտուղարութեան յատկացեալ անձի մը թէև Պատրիարքարանի մէջ պաշտօն չունենալը կ'հաղորդուի Ս. Պատրիարք հօր կողմէ, սակայն ինք «Զիս այն ինչ էֆէնտին ղրկած է» պատասխանելով, անտարբեր կ'շարունակէ իր պաշտօն, առանց ականջ կախելու Ելեւմից Տեսուչին կողմէ եղած պաշտօնական ազդարարութեանց։ Կ'լսենք թէ այսօր Պատրիարքարանի բարապանաց եւ դռնապանին միջոցաւ պիտի ըլլայ պատշաճ զեկուցումն և պաշտօնական գործադրութիւնը (Վեր մի՛ ելներդ ազդարարութիւնը)։» — Եթէ իրաւ է այս պատմութիւն, ամէն խորհրդածութիւն աւելորդ է։

—Անգլիոյ Մէտսդըն քաղաքէն Նոյմ. 2 թուով կ'գրեն մեզ թէ քաղաքին պատուաւոր բնակիչներէն Մր. Թրէտկոլտ մեծաւ մարդասիրութեամբ վարուած է հոն գտնուող վեց հայ գաղթականներու նկատմամբ, որք տակաւին ուսանողական տարիքի մէջ գըտնուելով, օգնած է որ իրենց ուսմունքը չարունակեն Անգլիոյ կամ Ֆրանսայի մէջ։ Քաղաքին ժանտախտի սոսկալի համաճարակին դէմ իրենք զիրենք պաշտպանելու նիւթական միջոցներն ընձեռած է, ու գրէթէ անխուսափելի մահէ մը փրկած է զանոնք։ Զանոնելով ուրիշ միջոց Մր. Թրէտկոլտի նկատմամբ իրենց զգացումն յայտնելու, մեզ կ'դիմեն որ այս թանկագին բարեգործութեան համար իրենց շնորհակալիքն յայտնենք։

—Բերայի ազգային վարժարանաց տնօրէն Ցակոբ էֆ. Նիկողոսեան հրաժարական տուած ըլլալով իր պաշտօնէն, Բերայի Թաղ. Խորհուրդն հոկտ. 28 թուակիր պաշտօնագրով մը ըստ օրինի Ուսում. Խորհրդոյ հաղորդած է յիշեալ տնօրէնին հրաժարումը։

—Գրենական Ցանձնաժողովը Մարաշի Ազգ. վարժարանաց համար 1184 կտոր դասագիրք և մաս մը գրչագական պիտոյք յանձնեց Կարապետ էֆ. Մալխասեանի, Եւդոկիոյ համար 749 կտոր դասագիրք՝ Ցովհ. էֆ. Բէչքէճեանի, Եոզղատի համար 662 կտոր դասագիրք՝ Ցակոբճեան էֆ. Բիրէճեանի, եւ Եոզղատի Պրուն Գըլլա գիւղի համար 353 կտոր դասագիրք՝ դարձեալ նոյն էֆ.ին։

ՊՈՆՏԱՑԻ ՊԻՂԱՏՈՍԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Անցեալները լուր ելաւ թէ Վատիկանի մատենադարանին ձեռագրերուն մէջ երեւան ելեր է Պոնտացի Պիղատոսի կողմէ Տեղեկագիր մը ուղղեալ Տիբերիոս Կայսեր՝ Ցիսուսի Խաչելութեան վրայ։ Քննութիւնք կատարուած ըլլալով այս յոյժ չահեկան խնդրոյ վրայ, Հռոմէ քաշուած հեռագիր մը այս մասին հետեւեալ տեղեկութիւնները կ'հաղորդէ Լոնտոնի մամլոյն.—Երկու տարբեր աղբիւրէ լուր տրուած էր Լէոն ԺԳ.ի թէ գտնուած են Խաչելութեան վերաբերեալ ձեռագրեր. հատակոտորներ, մանաւանդ վերոյիշեալ պաշտօնագրին կտորները։ Բայց որովհետեւ այս ձեռագրերը խնամով քննել պէտք էր, Պապն հրամայեց մասնագէտներու որ մանրակրկիտ քննութեան մը ենթարկեն։ Հիմակ ալ մասնագէտք կ'տեղեկագրեն թէ գտնուած թուղթերն իսկականները չեն, այլ կը պարունակեն յիշողութիւններ այն իսկական տեղեկագրին զոր Պոնտացի Պիղատոս առ Տիբերիոս Կայսր առաքած էր Քրիստոնէական թուականին սկիզբէն անմիջապէս ետքը։ Իսկ այն ձեռագիրք որոց մէջ այս ակնարկութիւնը կ'ըլլայ Պիղատոսի Տեղեկագրին, կ'վերաբերին Քրիստոսի 150 տարւոյն. բայց այս կէտն ալ դեռ այնքան որոշ չէ։ Նոյն խնդրոյ վրայ Գ. եւ Ն. դարերէն պաշտօնագրեր կան առձեռն, միեւնոյն յիշատակութիւնները պարունակող, բայց բուն իսկ Առաջին դարու թղթի մը արժէքը չունին բնականապէս։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՑՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Պոլսոյ վերաքննիչ ատենին անդամ անուանեցաւ Բերայի նախնական դատարանին հարցաքննիչ-դատաւոր անդամ Մուսթաֆա Ճէմալ պէյ, որուն յաջորդեց Տրապզոնի վերաքննիչ ատենին ընդհ. դատախազ Համտի պէյ. ասոր ալ յաջորդեց Կ. Պոլսոյ վերաքննիչ ատենին ընդհ. դատախազի օգնական Մուսթաֆա Մազհար պէյ։ Կ. Պոլսոյ վերաքննիչ ատենին ընդհ. դատախազի օգնական անուանեցաւ Բերայի նախնական դատարանին ընդհ. դատախազի օգնական Մէհմէտ Մազհար պէյ։ Խարբերդի նահանգին կեդրոնական նախնական դատարանին պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Սերզերայի նախնական պատժական դատարանին նախագահ Սատտուլլահ էֆ., որուն յաջորդեց Տենիզլիի նախնական դատարանին ընդհ. դատախազի օգնական Ասաֆ էֆ։ Տենիզլիի նախնական դատարանին ընդհ. դատախազի օգնական անուանեցաւ Հէքքեարիի նոյն դատարանին ընդհ. դատախազի օգնական Մէհմէտ էֆ. որուն յաջորդեց Եոզղատի նոյն դատարանին ընդհ. դատախազի նախկին օգնական Ճէմալ էֆ։

—Տրապզոնի Պաֆրա գաւառակին Նաիպ անուանեցաւ Իսքէնտէրունի նախորդ Նաիպ Ահմէտ Սամի էֆ։

—Ա. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Լիբանանու կառավարիչ Նաում փաշային։ Բ. կարգի Օսմանիյէ՝ Կիւմիւլճինէի կառավարիչ Խայրի փաշային։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՄՈՒՆՔ

«Գերմանիոյ դեսպան Պարոն ֆոն Սաուրմա Եէլչ, որ Հռոմի դեսպան կարգուած է, երէկ իրիկուն Եըլտըզի կայս. Պալատն հրաւիրուելով մատոյց իր հրաժեշտի գիրը. յետոյ կայս. հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ իրեն։ Ներկայ գտնուեցան նաև Բարձր. Մեծ-Եպարքոսը, Դատական Բարձր. նախարարը, Բարձր. Սպարապետը, Ծովային Վսեմ. նախարարը, Պետական Խորհրդոյ Վսեմ. Նախագահը, Արտաքին գործոց նախարարը, Թընդանօթարանի Վսեմ. վերատեսուչը, դեսպանատան պաշտօնեայք և պալատական պաշտօնատարք։»

—«Կայս. Իրատէ մը արտօնեց գործածութիւնն Ա. կարգի «Սողոմոնեան Կնիք»ի պատուանշանին զոր Հապէշ կառավարութիւնը տուած է Բազերապուրկի օսմ. դեսպան Հիւսնի փաշային։»

ՄԵԾ-ԵՊԱՐՔՈՍՆ եւ այն Նախարարք որք նախարարական յանձնաժողովը կ'կազմեն, առջի օրը գումարեցան ի Կայս. Պալատ։

ԱՐՏԱՔԻՆ գործոց Նախարար Թէվֆիք փաշա երէկ առաւօտ աւստրեան դեսպանատունը գնաց եւ տեսակցեցաւ դեսպան ֆոն Քալիչէի հետ։

ՊԵԼԿՐԱՏԷ կ'հեռագրուի թէ՝ կ'ըսէ Մօնիդէօր, իրազեկ անձինք կ'յայտարարեն որ սուտ յերիւրանք մ'է այն լուրն որով իբր թէ Սերպիա կ'ուզէ եղեր Գոսովայի նահանգին մէջ խառնակութիւններ հանել։ Սերպիոյ վարչապետ Մ. Վլատան Եորկէվիչի նոր չրջաբերականն ասոր հերքում մ'է։

Ի Բ. ԴՈՒՌՆ.— Գերմանիոյ դեսպան ֆօն Սաուրմա Եէլչ առջի օրը Բ. Դուռն երթալով արտաքին գործոց նախարար Թէվֆիք փաշայի հրաժեշտի այցելութիւնը տուաւ։

—Ամերիկեան դեսպան Մ. Անճէլ եւս երէկ ի Բ. Դուռն Մեծ-Եպարքոսին եւ արտաքին գործոց նախարար Թէվֆիք փաշայի հետ տեսակցեցաւ։

ՆԱՒԱՐԱՆ.—Աֆրիկեան Տրիպոլսոյ մէջ նաւարան մը չինել կ'մտածուի նաւերու նորոգութեան համար, ինչպէս Իզմիտ կ'գտնուի արդէն։

ՏԻԱՐՊԷՔԻՐԷ կ'գրեն մեզ Հոկտ. 13 թուով.— «Ձմեռը մօտեցաւ, եւ աղքատք նպաստի կարօտ վիճակի մէջ կ'մնան։ Ցաւալին հոն է որ արմտեաց գիներն ալ բարձրանալու վրայ են։ Այժմէն մեծ քանակութեամբ ցորեն կ'փոխադրուի լաստերով ի Մուսուլ։ Տարւոյն հունձքերն արգիւնաւէտ էին, բայց աղքատ գիւղացին ամէն տարուան պէս չկրցաւ ցանել, որպէս զի առատօրէն հնձել կարողանար։»

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ եւ Հանրօգուտ չինութեանց նախարար Մահմուտ Ճէլալէտտին փաշա միանգամայն ընդհ. տնօրէն կարգեցաւ Երկրագործական Դրամատան։

«ԿՈՒՐՃԻ ընկերութեան Իզմիր չոգենաւը, կ'ըսէ Սապահ, ասկէ առաջ Վառնա տանելու համար Պիրէօնէ հելլէն չարագործներ առած էր։ Դարդանելի իշխանութեանց կողմէ անցնելու թոյլ չտրուելուն, այն չարագործք Կուրճի ընկերութեան Մէֆքիլէ չոգենաւը փոխադրուելով Պիրէօն ետ ղրկուեցան և Իզմիր չոգենաւը 14 ճամբորդով հոս հասաւ. ճամբորդներէն 9ն ըստ օրինի անցագիր ունենալով, թոյլատրուեցան դուրս ելնելու. մնացեալ հինգը Վառնա երթալու համար չոգենաւուն մէջ մնացին։»

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Եւրոպական լրագիրք, կ'ըսէ Իգտամ, ծանուցագիր կ'համարին այն լրագրական աղերսանքները զոր պուլկար իշխանապետութիւնը կ'ընէ իր գերիշխան տէրութեան։ Իգտամ կ'յարէ թէ գերիշխանին ու հպատակին միջեւ եղած քաղաքական հաղորդակցութիւնք բռնաւորի թագրիրներ են ըստ օրինի։

ԱԾՈՒԽ.—Կայս. կառավարութիւնն որոշեց որ ածուխի բեռնաքանչիւր հարիւր օխան քառասուն ղրուշէ աւելի չծախուի և հակառակը գործող ածխավաճառք պատժուին։ Այս մասին հրաման ղրկուեցաւ ամէն կողմ։

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԹՈՇԱԿ.—Թուրք լրագիրք կ'ըսեն թէ Կայս. Իրատէով ամսական չորս հարիւր ղրշ. յատկացուեր է Նաւային զինուոր Ահմէտի որ անցեալ տարուան Հայոց դէպքին վիրաւորուած և աշխատելու անկարող վիճակի մատնուած էր։

ՄԱՔՍԱՏՈՒՆՆԵՐԷՆ ապրանք հանող վաճառականներէ և միջնորդներէ զատ փոխանորդագիր պիտի չպահանջուի, միայն Առեւտրական Սենեակէն վաւերացեալ փոխանորդագրերն ու վկայագրերը բաւական պիտի ըլլան։

—Մաքսատան մէջ տէրն անծանօթ մնացող ապրանքներէն անոնք որ շատ օր մնալով փչանալու ենթակայ են, որոշուեր է քաղաքապետական պաշտօնեայի մը և Իտարէի Ժողովի անդամի մը ներկայութեան վաճառել, և մաքսատուրքն եւն. վար դրուելէ վերջ, մնացեալը պահել, տիրոջը յանձնելու համար երբ երեւան ելնէ։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ Քննիչ Ցանձնաժողովոյ անդամ և կայս. Թիկնապահ Էմին փաշա առջի գիշերը մեռաւ իր բնակարանին մէջ ի Գանլըճա։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ. — Անցեալ յունիս, յուլիս և օգոստոս ամիսներուն Կ. Պոլսոյ մէջ պատահած մահերու թիւն է 2685 որոց 1340ն այր և 1345ը՝ կին։ Ասոնց 1627ն Իսլամ են, 906ը Քրիստոնեայ և 152ն Հրեայ։ Ամենէն չատ տիրող հիւանդութիւններն են հիւծախտ, հնչափողի ու որովայնի հիւանդութիւնք, հարսանիթ, ծաղկախտ, ժանտատենդ, կեղծմաշկ և կարմրախտ։

ՓԱՍԱՊԱՅԻ երկաթուղոյն Ուչագ-Տօնը Բօնարի գիծն ալ աւարտելով, կառախումբերը երթեւեկն արտօնուեցաւ յետ քննութեան։

ՆԵՐՈՒՄ.—Ինչպէս կ'յիշուի Ճորճի Մանէթ իբրեւ խարդախութեամբ սնանկացող երեք տարուան բանտարկութեան դատապարտուած ըլլալով 14 ամիսէ ի վեր բանտարկուած կը գտնուէր։ Կայս. Իրատէ մը ներում շնորհեց Ճորճի Մանէթոյի։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

Այս առաւօտ առնուած Եւր. հեռագրական գիները դէպ ի վեր տարբերութիւն մը կ'ցուցնեն։ Բարիզի Սակարանին երէկ իրիկուան գոցուածին հեռագիրն է Ֆոնս. 22 ղրշ. 30 սանդիմ և Երկթ. 111.5 ֆր.։ Լոնտոնի հեռագիրն է 22 ղրշ. 3 սնդ։

—Երէկ առաւօտ, հոս 24 ղրշ. 1 փր. բացուած էր. իրիկուան գոցուեցաւ 24 ղրշ. 4 փր. և այս առաւօտ բացուեցաւ 24 ղրշ. 8 փր. և 9 փր. եղաւ։ Երկթ. 111.75։

ՓԱԿՈՒՄ

Օսմ. քօնսօլիտէ Սէրի Դ. Օ. Ռ.		24 04
Ամէնէն բարձր գին	»	24 04½
Ամէնէն վար գին	»	24 01
Ռումէլիի երկաթ. զոց. ֆր.		111 25
Ամէնէն բարձր գին		111 37½
Ամէնէն վար գին		110 62½

ԲԱՑՈՒՄ, 29 Հոկտեմբեր

Օսմ. Ֆոնս. Սէրի Դ. Օ. Ռ.		24 08
Ռումէլիի երկաթուղի ֆր.		111 75
Օսմանիյէ	»	— —
Ռէժի	»	— —
Օսմ. Պանքա	»	14 30
Քաէտի ժէնէրալ օթթօմ.	»	7 —
Երկրագործական Պանքա	»	9 —
Սօս. Օթ. Շանժ է Վալ. Ա. Ռ.		3 08
Օսմ. Ապահ. ընկեր.	»	4 03
Թրամուէյ բաժնեթ.		687 20
» Ժուիսանս		232 20
Թրամուէյ պարտամ. ֆր.		496 —
Տէրքօսի ջուրի ընկ.	»	329 —
Քարաք. Կ. Պոլսոյ	»	460 —

ՍԻՒԽԱՆՏ

Քօնսօլիտէ ուշ օրուան Օ. Ռ.		2 50
» մէկ ամսուան »	»	— —
Ռում. երկ. ուշ օրուան »	»	— —
» » մէկ ամսուան »	»	— —

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 ֆրանքնոց	ղրշ.	87 14
Անգլիական ոսկի	»	109 38
Բօլ Իմփէրիալ	»	89 30
Քրիմից	»	51 05
Մէճիտիյէ արծաթ	»	107 30
Ռուսիոյ Թղթադրամ Օ. Ռ.		8 55

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	ղրշ.	109 7/16
Փարիզ 3 »	ֆր.	22 95
Ֆիօրին մանուշ	»	10 86¼

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, 9 Նոյմ.

Օսմ. քոնս. Սէրի Ա.	Ա. Ռ.	66 —
» » » Բ.	»	42 37
» » » Գ.	»	24 50
» » » Դ.) բաց.	»	21 87
) զոց.	»	22 12
Փոխառութիւն Դամասկոս	»	83 50
» Օսմ. 3½%	»	97 25
Օսմ. Կայս. Պանքա	»	13 69
Այտընի երկաթուղի	»	15 —
Եգիպտական Մէացեալ	»	107 12
Անգլ. քօնսօլիտէ	»	112 75
Հելլենական 5%	»	33 —
Մօնօբոլ Հելլենական 4%	»	36 —
Ռանթ » 4%	»	27 12
Պուլկ. փոխառ. 6% 1888	»	94 63
» Նոր » 6% 1892	»	94 —
Փոխան. Փարիզի վրայ	»	25 33¾
Դրամազեղչ	»	3 —

ՎԻԵՆՆԱ, 9 Նոյմ.

Փոխան. Փարիզի վրայ	ֆիօր.	47 60
» Լոնտոնի վրայ	»	119 85
Ռումէլիի երկաթուղի	»	60 10
Օսմ. Ռէժի	»	152 —

ԲԱՐԻԶ, 9 Նոյմ.

Օսմ. քօնս. Սէրի Դ.) բաց.	ղրշ.	22 20
) զոց.	»	22 30
» » » Բ.	»	42 95
» » » Գ.	»	24 75
Օսմանիէ	»	— —
Ռումէլիի երկաթուղի	ֆր.	111 50
Օսմ. Ռէժի	»	328 —
Օսմ. Կայս. Պանքա	»	595 50
Ֆրանս. Ռանթ 3% Գ. Կ.	»	103 75
Քաէտի Լիօնէ	»	775 —
Պանք տը Բարի	»	855 —
Սուէզի բաժնեթուղթ	»	3247 —
Իտալական Ռանթ	»	94 45
Սպանիական արտաքին	»	60 03
Զէք Լոնտոնի վրայ	»	25 175
Դրամազեղչ	»	02 —

ՊԵՐԼԻՆ, 9 Նոյմ.

Օսմ. փոխառութիւն 1888	մարք	95 —
Ռումէլիի երկաթուղի	»	115 50
Անատ. երկ. պարտամ.	»	93 75
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 205

ՄԻՀՐԴԱՏ
ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀՈՎԱՆՈՑԱՎԱՃԱՌ
ՂԱԼԱԹԻՈՅ

Կ'ծախէ ճաշակաւոր եւ հաստատուն հովանոցներ՝ մետաքսէ և բուրդէ. Կ'խնդրէ որ ծանօթք եւ բարեկամք եթէ հովանոցի պէտք ունենան, իրեն դիմեն։ Պատրաստ է գոհ ընել զիրենք թէ՛ ապրանքի յաւութեամբ և թէ աժանութեամբ։ Հովանոցներու հինցած կերպասներն ալ կ'փոխէ։

Ղալաթիա կամուրջին դէմ Գումիւշլիւն խանի անկիւնը։ 20—5

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ
ԲԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Պաղչէ-Գափու Համիտիյէ ճատտէսի, Թիւրպէին ճիշդ դիմաց Թիւ 21

Այս անգամ Եւրոպայէն ձմեռուան համար զուտ անգղիական և գաղղիական ճաշակաւոր ապրանքներ բերել տուած ըլլալով, չափու վրայ կ'պատրաստէ ամէն տեսակ զգեստեղէններ և ձեւի վայելչութեամբը գոհ կ'ընէ բոլոր յաճախորդները։ Կ'յանձնարարուի ուրիշ տեղ դիմելէ առաջ այցելել սոյն վաճառատունը։ — Գիները չափաւոր և յարմար։ 30—5

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ
970,000,000 ՖՐԱՆՔ
ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ Ե'ՒՐՈՊԱ

Փարիզ, 16, Պուլվառ տը դ'Իթալիէն 1, 3 եւ Ռը Լըբըլըթիէ փողոցի սեփական շէնքին մէջ

1845 հիմնուելէն ի վեր

Ապահովագր. ներու վճ. 1,219,000,000

1896ի տարեշրջան

Ապահովագրեալներու վճ.	96,000,000
Հասոյթ	203,000,000
Նոր ապահովագրութիւնք	630,000,000
Ապահովագրուողներուն փոխ տրուած	15,000,000

1897 յունուար 1

Աւանդք և անշարժ կալուածք յ'Եւրոպա	43,000,000
Ցաւելեալ դրամագլուխ	138,000,000
Արդի ապահովագրութիւնք	4,285000000

Տիեզերական ապահովագիր

Շահաբաժիններու բարդմամբ և ապահովչներու վերադարձմամբ՝ ի դէպ մահու։ Պայմանագրութեան նոր եղանակ, սկսեալ Առաջին տարւոյն լրանալուն պէս։ ԱՌԱՆՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԻ ի մասին բնակութեան և ուղեւորութեան. Հինգ տարի վերջը ԻՐԱՒՈՒՆՔ տալով Ընկերութեան փոխառութիւններու ողջ գումարը նշանակուած է ապահովագրին մէջ։ Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար դիմել առ

Տնօրէնութիւն ի Թուրքիա
Ճ. ՌՈՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.
Վօյվօտա փողոց, Վիթալիս խան
Ղալաթիա

ՃՇՄԱՐԻՏ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ
ՍԻՆԿԷՐ
ԼԱՒԱԳՈՅՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ
ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Կ' ՆԱՅՑԼԻՆԿԷՐ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ի ԳԱՒԱՌՍ ԵՒ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԲԵՐԱ. — Մեծ-փողոց կալաթա Սէրայի Լիսէին դիմաց։

ՂԱԼԱԹԻԱ. — 1. Սինկէր խան, Թիւնէլի ետին։ 2. Գարաքէօյի մօտ Թիւ 120, Շիշլիի Թրամուէյներու կայարանին դիմաց։

ՊՈԼԻՍ. — Ուրբէճի Հօճա-Փաշա, Պապը Ալի Ճատտէսի Թիւ 11։ եւ Սուլթան Պայազիտ Թրամուէի կայարանին դիմաց Թիւ 13.

ԱԶԴ. — Ս. Ցակոբայ ազգային Անկելանոց - Հիւանդանոցի սեփականութիւնն եղող Բոյի ընտրելագոյն տեսակէ 250 և 125 կրամ պարունակող թիթեղեայ տուփերու մէջ մասնաւոր խնամով պատրաստուած սուրճն անուրժաւամ եւ անարատ ըլլալով, կ'խնդրուի պատուարժան ազգայիններէ որ բարեհաճին գործածել յօգուտ սոյն հաստատութեան մէջ պատսպարեալ բազմաթիւ անկելոց։

Հոգաբարձութեան կնքով կնքուած յատուկ պիտակը չկրող տուփերը կեղծ են։ Կեդրոնատեղի Ղալաթիա, Ենի Ճամի ճատտէսի, Ջինճիրլի խանի կից, Թիւ 70 մթերանոցն, ուր պէտք է դիմեն մասնաճիւղ հաստատել ուզողներն եւ նախապէս պայմաններուն տեղեակ ըլլան։ Գին 250 կրամնոց տուփի $3\frac{1}{2}$ ղշ.
» 125 » » $1\frac{3}{4}$ »

Փափաքողք կրնան գնել սոյն սուրճէն ի ստորեւ նշանակեալ խանութներէ, ինչպէս նաեւ զանազան մանրավաճառներէ և ծխավաճառներէ։ Բերա, Մեծ փողոց, չէքէրճի Հաճի Սարիմ աղային 136 և 54 թիւ խանութները։ Բանկալթի, ազատր Սհէմեան Գրիգոր աղա։ Օրթաքէօյ, Ֆէսճի Վիչէն աղա Բէթլինճեան։ 15—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — Ա. Եւրոպայի եւ Տաճկաստանի միջեւ առեւտրական յարաբերութիւնք ընդարձակելուն, Յակոբ Մաղաքեան՝ տարիներէ ի վեր հաստատուած ի Նափոլի, փորձ յանձնակատար, կ'կատարէ ապրանաց առուծախի գործողութիւններ. — Բ. Դէպ ի Մ. Նահանգներն ամէնէն կարճ ճամբան Նափոլի ըլլալով, շոգենաւային մեծ ընկերութեանց հետ կնքած պայմանագրութեամբք, շահաւոր պայմաններ կ'ցուցնէ ճամբորդին. — Գ. Եթէ Ֆլորիօ Ռուպադդինօ շոգենաւային ընկերութեան դիմուի եւ յայտնուի թէ Նափոլի Մաղաքեանի կ'երթան, տոմսակի գ'նոյն զեղչ կ'ստանան գաղթականք միայն. — Դ. Այդ ընկերութեան չդիմողք կարող են ուրիշ ո եւ է շոգենաւով մեկնիլ ի Պիրէոն, եւ հոն նոյն ընկերութեան շոգենաւով գալ Նափոլի. — Ե. Աւելի մանրամասնութեանց համար դիմել հետեւեալ հասցէին։

Jacques Maghakian
Vico III del Piliero N. 4
(Italie) Naples
(Հեռագրի հասցէ)
Maghakian Naples

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ.
ՎԵՐԿԵՆԱԿԱՆ ՄԱԶԻ ՆԵՐԿ

Եթէ կ'փափաքիք հինգ վայրկենի մէջ մօրուքնիդ և մազերնիդ սեւ կամ շագանակագոյնի փոխել, դիմեցէք Մահմուտ փաշա Բիւրքճի խանի դիմացի կարգը 131 Թիւ Արամ էֆ. Սօղանճեանի վաճառատունը։ Հոն տեսնելի մազի ներկի ջուրն անվնասութեամբ

բաղադրուած է ի Բարիզ, և մազերուն տուած փայլունութեամբ, կակղութեամբ եւ գործածութեան դիւրութեամբ, փորձով հաստատուած է թէ մինչեւ ցարդ Եւրոպայի մէջ պատրաստուած ջուրերէն անմրցելի կերպով յաւ է։

ՇԻՇ ՄԸ՝ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԿԸ ԲԱՒԷ. — ԳԻՆԸ ՉԱՓԱՒՈՐ

Կեղծերէն զգուշանալու համար միայն շիշը պարունակող տուփին վրայի ստորագրութեան և Տոբէոյին ուշադիր եղէք։

Սոյն վաճառատան մէջ կ'գտնուի նաեւ սեւ մազերը դեղինցնելու համար ջուր, և մասնաւորապէս գլխարբուզով խնամով պատրաստուած ներկիր՝ սեւ, խարտեաշ եւ շագանակագոյն փոխելու։ 20—6

ՔԻՒՆԱՐՏ
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվըրբուլ և Արեւելքի միջեւ ամէն երկու անգամ բանող շոգենաւեր

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ումպրիա	7718	Սամարիա	3563
Էթրուրիա	7718	Մարաթոն	2474
Սերվիա	7391	Ալկա	2306
Ուրանիա	7268	Սարակոսա	2169
Բավոնիա	5587	Թարիֆա	2243
Սեֆալոնիա	5517	Բալմիրա	2144
Կալլիա	4809	Թրինիտատ	1899
Մալթիա	4557	Մորոգգօ	1855
Ալկերօ	2143	Պրիթիշ Բռուին	735
Բէտար	1876	Բարինդիա	5598
Շերպուր	1614	Սիլվանիա	5590
Փագալոնիա	4845	Բաւրանիա	12950
Պոթնիա	4531	Լուքանիա	12958

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈՒՐ գործակատար
Ալիքսիատիս խան, Թիւ 4
Ղալաթիա

ՌՕՍԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20 ի կայս. Իրատէով արտօնեալ
Ընկերութեան կեդրոնատեղին Բեթերպուրկ
Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37
Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ. — ԿԵԱՆՔ. — ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՐԿԱԾՔ։

Ընկ. դրամագլուխ ամբողջովին վճարուած	10,000,000 ֆր.
Երաշխաւորութեան գումար	67,000,000 »
1895 ի հասոյթք	25,000,000 »
1881 էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ	100,000,000 »

Ընկերութեան քննիչ ի Կ. Պոլիս — Յ. ՀԻՒՐՄԻՒԶ
Ղալաթիա, Բորսային վրայ (Հին Մոստառատ տեղը)
Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար — ԹԷՕՏՕՐ ԲԷՐԷՆ

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ
ՄԻԱՑԵԱԼ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆրանք	14,500,000
Պահեստի դրամ	»	21,173,000
Տարեկան հասոյթ	»	44,820,000

Ընկերութիւնս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրէ մթերանոցներ և բնակարաններ և ասոնց մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ, խիստ չափաւոր սակագիններով։

Լիազօր Ներկայացուցիչ Կ. Պոլսոյ
ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս Պահչէ-Գափու, Անանիատիս խան, 12, 13, 14

ՄՈՍ
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվըրբուլ և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ամասիա	3500	Թիպս	2500
Վլաանկօ	3500	Մարէօթիս	2500
Մէնիս	3500	Նէրգիս	2500
Անիւպիս	3000	Բեքա	2250
Ապօր	3000	Օսիրիս	2250
Անօբիւս	3000	Սֆինքս	2000
Օսմանլի	3550	Կասաքոնի	1500
Ֆարօս	2750	Կիէն	1500

Դիմել առ Ժ. Վ. ՈՒԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթօլ խան
ՃԷՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
34, Ճէյմս Սդրիդ, Լիվըրբուլ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ
Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.
Տրապիզոնի և Պոլսոյ միջեւ կանոնաւորապէս բանող

Ա. կարգ 245 ֆրանք
Բ. » 175 »

Ուղեւորաց եւ ապրանքներու փոխադրութեան, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Դիմել առ գործակատար
ԹԻՄՈԹԷ ՌԸԳՈՒԼ
Մումհանէ փողոց Թ. 1

THE
LANCASHIRE INSURANCE COMPANY
ՀԻՄՆԵԱԼ Է 1852 ԻՆ
ԸՆԿԵՐԱՑԻՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Ճ'ԱՆԳԼԻԱ
Lancashire Insurance Buildings
Exchange Street Manchester

Դրամագլուխ 3,000,000 անգլ. ոսկի
Պահեստի գումար 1,511,280 »

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Հրդեհի դէմ ապահովագրութիւնն, ամէն տեսակ քարուկիր ու փայտաշէն կալուածներու վրայ, կահերու և ապրանքներու վրայ եւն., յոյժ նպաստաւոր պայմաններով ու սակերով։

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Այս ընկերութիւնն յոյժ բարձր առաւելութիւններ կը ներկայացնէ բոլոր այն առաւելութիւնները զորս կ'ուզեն փափաքիլ կեանքերնին ապահովագրել ուզողներն, ամբողջ կամ խառն՝ որոշ պայմանաժամով։

Նոր հանուած պայմանագրութեան տեսակ։

Տիեզերական ապահովագիր անվիճելի առանց ի ճամբան և լուծում մասնակցութեան։

Ամէն տեղեկութեանց համար դիմել ընդհ. գործակալներուն, (Bond, Sellar and Co.) Պոնտ Սելլէր և Ընկ. Բիւյիւք Թիւնէլ խան, Ղալաթիա։

ՖՐԵՏ. ԼԷՅԼԱՆՏ ԵՒ ԸՆԿ.
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվըրբուլ և Արեւելքի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Վիքդորիան	10500	Ցիլվիան	3500
Ալպանիան	10500	Էնֆրիչիըն	3500
Քէսդրիան	10500	Բրոժիըն	3000
Լանքասդրիան	9000	Ալճէրիան	2500
Ֆիլատելֆիա	9000	Արապիան	3500
Գոլըմպիան	8000	Աթէնիան	2500
Ծօրճիան	8000	Անատոլիան	2500
Պոսդոնիան	8000	Ալճաշիըն	2500
Ֆիրճինիան	8000	Լէգոյիան	2000
Ֆալէրնիան	3700	Մինքօ	100
Վավոնիան	3700	Օպորդօ	800
Ֆլամինիան	3700	Լիսպոն	800
Ֆապիան	3500		

Հովտյեան շոգենաւը, Նաւապետ Լօկան, Լիվըրբուլէն կ'սպասուի ընդհ. ապրանքով դէպ ի 3 նոյմ.։

Ապրանքի տէրերէն կ'խնդրուի իրենց ապրանքն այլուր փոխադրելու կամ Ղալաթիոյ մաքսատունն հանելու համար իրենց հրահանգը դրկել շոգենաւին ժամանումէն 24 ժամ առաջ։

Աւելի տեղեկութեանց համար դիմել առ ԷՏՎԱՐ ԼԱՖՈՆՏԷՆ
Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 1
Ղալաթիա

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
ԻՏՊԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ՕՐԱԳՐՈՅ
Կ. Պոլիս, Նօ 38, Պապը Ալի Ճատտէսի

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի. (10)

ՔԱՍԻՄ
ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՂՋԻԿԸ
ՎԷՊ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

—Դուն նայէ որ աս խելքդ փոխես, ես սկզբունքիս չեմ կրնար զատուիլ։

—Սկզբո՞ւնքդ ինչ է քա՛.

—Կատարելապէս համոզուած մէկ բան։

—Զհասնէիր համոզուելու որ դէմս կեցեր խօսքիս դէմ խօսք կը հանցնես. չըլլային, չըլցուէին աս գպրոցներն որ քեզի պէս զաւակ չը կրթէին։

Եւ մայր ու աղջիկ, կատարելապէս հաստատ իրենց համոզման վրայ, խոժոռ դէմքով բաժնուեցան իրարմէ. Մայրը խոհանոց իջաւ կերակուրի պատրաստութիւն տեսնելու, իսկ աղջիկն առանձնասենեակը քաշուելով չորանկեց կարդալ կիսատ թողած մէկ վէպն, ուր իշխաններ, կոմսեր, միլիոններ, ադամանդներ երեկոյթներ, վերջապէս երեւակայական ամէն ճոխութիւններ իրարու կ'յաջորդէին, շնորհիւ հեղինակին ստեղծած արտակարգ հերոսներուն եւ աշխարհի վրայ բնաւ գոյութիւն չունեցող միջավայրերուն։

Բ.

Երիտասարդ խանութպանն որ Ցակոբ Կառիկեան կ'ըսուէր, մօրն ու աղջկան խանութէն մեկնելէն վերջ, ակնարկովը բաւական ժամանակ հետեւեցաւ անոնց, «արդեօք ա՞յս է, կ'ըսէր, բախտն որ այնչափ ապասցուց զիս. 500 ոսկի մը տալու են ասոնք, ունեւոր են, ինչո՞ւ չը տան. մայրը խելքը պիտի թացնէր վրաս, աղջիկն աժկոտ է բայց շատ սիրուն, գոնէ 600 ոսկի մը տա՛յին, ի՛նչ գործեր չէի կրնար ընել». եւ այս մտածութիւններով երկար բարակ օրօրուելով, մտքին մէջ հարստութեան ծրագիր մը շինեց որ 700 ոսկիէ պակասով չէր կրնար գործադրուիլ. «բայց ինչո՞ւ չտան կ'կրկնէր անընդհատ, քանի որ ունեւոր են ու մայրն այնչափ հաւնեցաւ ինձ»։ Ցետոյ անմիջապէս տետրակը ձեռքն առնելով «Օրթագիւղցի Գրիգոր աղա Շիրինեան» անունը քանի մը անգամ կարդաց անոր մէջ. «ի՞նչ ճոխ անուն կ'մալտար, կարելի՞ է որ Գրիգոր աղա Շիրինեան մը 700 ոսկի չտայ աղջկանը։» Եւ այն օրը մինչեւ իրիկուն այս ամուսնական ծրագրով զբաղեցաւ. տուն վերադառնալուն չէտակ կեդրոնական քազինօն գնաց, հոն անուղղակի կերպով գաղափար մ'առնելու համար Գրիգոր աղա Շիրինեանի նիւթական կարողութեանը վրայ, ուրկէ կախուած էր իր ապագայ հարստութիւնը։

Խասգիւղ՝ այն Թուականներուն լքուած չէր. ճոխութեան, զուարթութեան, կեանքի եռեւեփ մը կը նշմարուէր գիւղին մէջ. ճշմարտապէս մայրաքաղաքիս է—ճէյը կ'պատկերացնէր ոսկեզիւրի այս հոյակապ ստտանը։ Ամէն ծովը, դիմացը Չիլիֆտարին, եաւին Բեազըտեանէն, Օգմէյտանին, այնպիսի առաւելութիւններ են, զորս բնութիւնն հազիւ կ'հաճի շնորհել գիւղի մը. Բայց չի գիտցուիր ի՛նչ քմահաճոյքով հետզհետէ քաշուեցան գիւղին բնակիչներն եւ տասնեակ տարիներէ ի վեր լքանելով իրենց եզական բնավայրն, այնպիսի գիւղեր հաստատուեցան, որք Խասգիւղի առաւելութիւններէն ու գիւրութիւններէն և ոչ մին ունին։ Սակայն կ'երեւի թէ Կ. Պոլսոյ գիւղերուն համար ճակատագրական է այս լքում. Ենիգաբուն, Օրթագիւղը, Պալաթն ու Էյուպն հետզհետէ կը պարպուին, խճողելու համար Բերան, Գատըգիւղն ու Վոսփորը, մինչեւ ցնոր քմահաճոյք։ Պատմագիրներու թողլով այս տեղափոխական խնդիրներու ուսումնասիրութիւնն որ շատ հեռուն կ'տանի զմեզ, դառնանք մեր ընթերցողաց ծանօթ Ցակոբ Կառիկեանի, որ ճամբան անընդհատ «Օրթագիւղցի Գրիգոր աղա Շիրինեան» յեղյեղելով վերջապէս հասաւ Թաղին ամէնէն հաչակաւոր զբօսարանը, գեղեցկանստան քովի կեդրոնական քազինօն, որ լեցուած էր գրեթէ բարեկեցիկ Թաղեցիներու հոծ բազմութիւնով մը։ Առաւօտէն մինչեւ իրիկուն շուկայի աղմուկներէն, վաղվաղուքներէն, մրցումներէն եւ քիչ մ'ալ բանակռիւներէն յոգնած պարտասած առեւտրականներ՝ օդին ընծայած վաղանցիկ հաճոյքով կ'ուզէին փոխարինել այս ամէնն, եւ կարծես իրենց սիրական ըմպելիին հրապոյրն աւելցնելու յատուկ գիտումով, ժողովրդական բանաստեղծ մ'ալ հետեւեալ ազդեցիկ տողերը գրած էր գինետան ճակատը,

Ամէն ցաւերու դարմանը հոս է,
Բժշկապետը պարոն Բաքոս է։

Բայց մեր խանութպան Ցակոբ Կառիկեան, գինետուն չէր երթար շուկայի յոգնութիւններէն հանգիստ առնելու, այլ իրիկունն ուղղակի տուն կ'վերադառնար եւ այս առթիւ ամսական 40-50 ղրշ. ի չափ դրամ կ'խնայէր. ուստի երբ գինետունէն ներս մտաւ, իբր պատահական հիւր, քանի մը սեղաններէ միանգամայն հրաւէր ստացաւ. սակայն ինք որովհետեւ մասնաւոր նպատակով մը եկած էր հոն, նախապատուութիւն տուաւ տասն հոգինոց խմբակի մը, որոնցմէ կ'յուսար կատարեալ ծանօթութիւն ըստանալ իր ապագայ աներոջ եւ հետեւաբար 700 ոսկի դրամագլուխին նկատմամբ, եւ գնաց նստաւ սեղանին չուրջը։

—Աս ո՞ր հովը քեզի հոս նետեց, Ցակոբիկ, ըսաւ գիրուկ մարդ մը, որ սեղանին կ'նախագահէր։

—Ի՞նչ ընենք, Արթաքի աղա, պատահմանց Ցակոբիկ, այսօր ալ այսպէս պատահեցաւ։

—Աֆէրիմ Ցակոբիկ պէ՛. ընել է անկէց վերջ մարդ պիտի ըլլաս ըսաւ ուրիշ մը։

—Ինչո՞ւ մինչեւ հիմայ մարդ չէ՞ր, հարցուց սեղանակից մը ծիծաղելով։

—Մարդ չէր, հապա՛, գինետուն չգացողը մարդ չի սեպուիր, վրայ բերաւ անդիէն երիտասարդ մը։

—Թողէ՛ք պէ ախպար, քիչ մը շունչ առնէ տղան. ըսաւ Արթաքի աղան, երդո՞ւմ ընել պիտի տաք անգամ մ'ալ հոս ոտք չկոխելու, է՛. Ցակոբիկ, ի՞նչ պիտի խմես։

—Դուք ի՞նչ խմէք կոր նէ ես ալ անկէց կ'խմեմ։

—Դուն մեզի մի՛ նայիր, մենք տուղ կ'խմենք կոր։

—Ես ալ տուղ կ'խմեմ։

—Գաւաթ մը բեր ծօ՛, հրամայեց Արթաքի աղան գինետան սպասաւորին և առջեւի սրուակէն օղի լեցնելով բոլոր սեղանակիցներու բաժակը։

—Աստուած գործի յաջողութիւն տայ, ըսաւ ու միահամուռ ամէննեչով բաժակները դատարկեցան։

—Է՛, Արթաքի աղա, սա Բոլոնոպը կ'պատմէիր կոր, եարը՛, հարցուց սեղանակից մը։

—Վա՜յ չուչանորդի բալամուտ, ըսաւ Արթաքի աղան, ծօ ախպա՛ր, աքան տարիէ ծուկ կ'ուտեմ ասանկ անմահական բան տեսած չէի։

— Բոլոնոտին աղէկը դուրդուտին հետ չեմ փոխեր, ըսաւ ուրիշ մը։

(Շար.)